

ՄԵՐ ԱՆԿԻՒՆԵՆ

Ատրայեյճանական «Խաւիարի Դիւանագիտութիւնը»

Ամերիկայի Գայակական Գամագումարը նամակը մը յղած է Ծերակոյտի Իրաւաբանական Յանձնախումբին, որ այս օրերուն լսումներ կը կազմակերպէ՝ ընտրեալ նախագահ Տոնալտ Թրամփի կողմէ, երկրի գլխաւոր դատախազի պաշտօնին վրայ ճէֆ Սէշնզի նշանակումը հաստատելու նպատակով:

Գամագումարի նամակը կը պահանջէ Ծերակոյտէն, որպէսզի մոր գլխաւոր դատախազէն ստանան յանձնարարութիւն, որ ան պիտի հետապնդէ Ամերիկայի Ժողովրդավարական մարմիններուն վրայ օտար պետութիւններու եւ յատկապէս Ատրայեյճանի ազդեցութիւնը վերացնելու հարցը:

Ամերիկեան օրէնսդիր մարմիններէն մերս գոյութիւն ունեցող բարոյական խախտումները անցեալ շաբաթ դարձեալ լայն քննարկման առարկայ դարձան, երբ Ներկայացուցիչներու Տան Գանրապետական մեծամասնութիւնը որոշեց փակել Գոնկրետի կից գործող եւ կառավարութեան մէջ բարոյականութեան հարցերուն հսկող կիսանկախ գրասենեակը: Այս որոշումը այնքան մեծ աղմուկ չառաջացուց, որ 24 ժամ չանցած, Գոնկրետի ղեկավարութիւնը ստիպուած եղաւ վերատեսուծեան ենթարկել իր նախկին որոշումը:

Այս առթիւ եղած քննադատութիւններու շարքին ուշագրաւ էր Bloomberg-ի հրապարակած յօդուածը, ուր կը ներկայացուէր 11 Ամերիկացի գոնկրետականներու, 2013-ին Պաքու կատարած այցելութեան ընթացքին ստացած թանկարժէք նուէրներու պատմութիւնը, որ հրապարակ հանուած էր՝ փակուելու ենթակայ այդ գրասենեակին շնորհիւ: Bloomberg կը տեղեկացնէ, որ հետագային այդ գոնկրետականները ստիպուած եղան պետութեան յանձնել իրենց ստացած նուէրները, իսկ Ատրայեյճանի վարչապետը կոչուեցաւ «Խաւիարի դիւանագիտութիւն»:

Դարձեալ այս օրերուն, Բրիտանական Observer թերթը եկաւ հրապարակելու Ատրայեյճանի կողմէ եւրոպական կառոյցներու ներկայացուցիչներուն տրուած կաշառքներու մասին կատարուած հետաքննութեան արդիւնքները:

Գայակական Գամագումարի դիմումը կու գայ ազդանշան տալու, որ Ամերիկահայութիւնը պատրաստ է իր ձայնը լսելի դարձնելու ու պայքարելու, որպէսզի Ալիեւի վարչակազմը չկարողանայ իր առատաւոր ընթացքով վարակել նաեւ Ամերիկեան քաղաքական շրջանակները՝ Գայութեան դէմ իր սանձազերծած բազմակողմանի պատերազմի ծիրէն մերս: «ՄԱՍԻՍ»

Նալպանտեան Արձագանքած է ԵԱՀԿ Մինսկի Խումբի Յայտարարութեան

«Համանախագահներն անդրադառնում են նրան, ինչի մասին մենք մշտապէս հետեւողականօրէն բարձրաձայնում ենք», - մեկնաբանելով ԵԱՀԿ Մինսկի խումբի համանախագահներու տարածած յայտարարութիւնը՝ հայ-ատրայեյճանական սահմանին ատրայեյճանական յարձակման փորձի վերաբերեալ, ըսած է Հայաստանի արտաքին գործոց նախարար Էդուարդ Նալպանտեան:

«Համաձայն ենք նրանց հետ, որ հրադադարի խախտումներն անընդունելի են: Համաձայն ենք, որ պէտք է անվերապահ իրականացուեն վիճարկում եւ Սան-Փեթերպուրկում ձեռք բերուած պայմանաւորուածութիւնները, ներառեալ, ինչպէս նշում են համանախագահները՝ հնարաւորինս կարճ ժամանակահատուածում ներդրուի միջադէպերի հետաքննութեան մեխանիզմը: Եռանախագահ երկրները բազմիցս են նշել, թէ որ կողմն է մերժում մեխանիզմի ներդրումը, հետեւաբար, հենց այդ կողմի վրայ է ընկնում միջադէպերի եւ գինադադարի խախտումների ողջ պատասխանատուութիւնը: Նման մեխանիզմը հնարաւորութիւն կ'ընձեռնի, ինչպէս համանախագահներն են ասում, ձեռք բերուել փոխադարձ մեղադրանքներին: Թէեւ, երբ ատրայեյճանական տիւերասանթը վնասագրեւծում է հայկական դիրքերում, բոլորի համար առանց մեխանիզմի էլ պարզ է, թէ ով է յարձակուել», - ըսած է Հայաստանի արտաքին գործոց նախարար Էդուարդ Նալպանտեան:



Հայաստանի արտաքին գործոց նախարար Էդուարդ Նալպանտեան

տանի արտաքին գերատեսչութեան ղեկավարը:

Նալպանտեան յոյս չայտնած է, որ եռանախագահները հետեւողական կ'ըլլան՝ անյապաղ խստօրէն արձագանքելու հակամարտութեան գոտիին մէջ ուժի կամ ուժի սպառնալիքի իւրաքանչիւր դրսեւորման՝ յատկապէս, երբ հրադադարի խախտման արդիւնքով գոհեր կ'ըլլան:

«Այն պայմաններում, երբ Ատրայեյճանը խոչընդոտում է հետաքննութեան մեխանիզմի ներդրումը եւ ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցչի թիմի կարողութիւնները ընդլայնումը, համանախագահներին մնում է այն եզակի ձեւաչափը, որն իր մանդատի համաձայն կարող է եւ պէտք է շարունակել իր կանխարգելիչ գործունէութիւնը», - ըսած է Նալպանտեան:

«Թուրքիոյ Գայ Գամայնքէն Շատեր Կը Ստածեն Արտագաղթելու Մասին» - Ըսած է «Այօսի» Խմբագիրը

Պոլսոյ մէջ լոյս տեսնող «Այօս» հայկական թերթի հայկական բաժնի խմբագիր Բազրատ Էստուկեան, Հայաստանեան NEWS.am կայքէջին տրուած հարցազրոյցի մը ընթացքին ըսած է, որ Թուրքիոյ հայ համայնքին շատերը այսօր կը մտածեն երկրէն արտագաղթելու մասին:

«Նախորդ տարին ոչ միայն հայ համայնքի, այլեւ Թուրքիայի բոլոր քաղաքացիներուն համար շատ ծանր տարի էր, մտահոգիչ իր բոլոր զարգացումներով: Թուրքիոյ բոլոր քաղաքացիները, անոնց շարքին 70-80 հազար հայերը, լաւ բաներու ակնկալիք այլեւս չունին, ցաւօք սրտի: Թուրքիոյ մէջ պատերազմական իրավիճակ է, հետեւաբար մտահոգութիւնները շատ են: Այս քանին յետոյ շատերը կը մտածեն Թուրքիայէն հեռանալու եւ աւելի ապահով երկրներու մէջ ապրելու մասին: Խօսքս ոչ միայն հայերուն կը վերաբերէ, այլեւ ուրիշ այլ ազգերուն: Մարդոց մօտ լաւատեսութիւն չկայ», - ըսած է Պոլսահայ խմբագիրը:

«Հեռացողները շատ մեծ թիւ չեն կազմեր, սակայն հեռանալու մասին շատեր կը մտորեն: Օրինակ, վերջերս յայտնի դարձաւ, որ 51 հրեայ հեռացած է Թուրքիայէն: Հայերու վերաբերեալ վիճակագրութիւն չկայ, միգրացի ըլլան արտագաղթողներ, սակայն հեռանալու մասին մտածողներն իրապէս շատ են»:

Խօսելով յեղաշրջումի փորձէն ետք հայութեան մօտ տիրող իրավիճակի մասին, Էստուկեան ըսած է. «Հայ համայնքի նկատմամբ յատուկ ճնշումներ չեն եղած, յատկապէս Յուլիսի 15-ին տեղի ունեցած դէպքերէն յետոյ: Միակ բացառութիւնը հայ բժշկի գրասենեակը փակած էին եւ կ'ըսուէր թէ, իբր այդ բժշկի գործընկերները առնչութիւն ունէին յեղաշրջման փորձի հետ, սակայն յետոյ ինդիքը հարթուեցաւ: Այս միակ դէպքն էր: Այնուամենայնիւ, այս դէպքէն յետոյ Թուրքիան աւելի բռնապետական դարձաւ, շատ

Ատրայեյճան կ'ուզէ Ղարաբաղ Այցելած Լրագրողի Գործը Դարձնել Նախադէպ



Լրագրող Ալեքսանդր Լաբշինի

Ատրայեյճանի գլխաւոր դատախազութիւնը Պելառուս իրաւապահներուն ներկայացուցած է անհրաժեշտ բոլոր փաստաթուղթերը լրագրող Ալեքսանդր Լաբշինի արտայանձնելու համար, հաղորած է դատախազութեան խօսնակը:

Համացանցի վրայ իր գրասալը ջական նօթերով յայտնի Լաբշին տարիներ առաջ երկու անգամ այցելած էր Ղարաբաղ՝ զայն ձանչնալով անկախ պետութիւն, ամիսներ առաջ քննադատած էր Իլհամ Ալիեւին, որմէ ետք պաշտօնական Պաքու անոր դէմ մի քանի քրէական գործ յարուցած էր եւ միջազգային հետախուզում յայտարարած:

Անցեալ տարեվերջին Պելառուսը, տեղի տալով Ատրայեյճանի պահանջին, Մինսկի մէջ ձեռքաւարկեց ու երկու ամսով ազատազրկեց իսրայէլի եւ Ռուսիոյ քաղաքացիու-

Ալիեւ «Պատմական Յաղթանակ» Որակած է Ապրիլեան Պատերազմը

Ատրայեյճանի նախագահ Իլհամ Ալիեւ Յունուար 10-ին հանդէս եկած է ատրայեյճանցիներուն ուղղուած շնորհաւորական ուղերձով, ուր անդրադարձած է 2016-ի ապրիլեան իրադարձութիւններուն: Ան, մասնաւորապէս, «պատմական յաղթանակ» որակած 4 օր շարունակուած պատերազմական գործողութիւնները:

Իր խօսքին մէջ Ալիեւ նաեւ յայտարարած է, որ 2016 թուականին Ատրայեյճանի միջազգային դիրքերը ամրապնդուած են: - «Աճած է մեր ընկերներու թիւը, իսկ մեր շարակամները՝ ուժեր որոնք պարբերաբար մեր դէմ արշաւներ կը կազմակերպեն, կը հեռանան քաղաքական դաշտէն», - յայտարարած է Ատրայեյճանի նախագահը՝ կրկին անգամ պնդելով, որ զարաբաղեան հակամարտութիւնը պէտք է կարգաւորուի տարած քայլին ամբողջականութեան սկզբունքի հիման վրայ:

Ի՞նչ Անապատելի Բաց Կարող է Տեղի Ունենալ Ապրիլին

ՆԱՅԻՐԱ ՉԱՅՐՈՒՄՅԱՆ

Հայաստանում խորհրդարանական ընտրութիւնները նշանակուել են 2017 թուականի Ապրիլի 2-ին: 2016 թուականի այդ օրն Ատրպէյճանն ազդեցիկ է իրականացրել Ղարաբաղի դէմ: Դա սակարալ օր է՝ դրամատիկ եւ շրջադարձային միաժամանակ:

Մի կողմից ողբերգութիւն է՝ աւելի քան 100 երիտասարդ կեանքերի կորուստ, սպանուածների անմարդկային խոշտանգումներ, 800 հեկտարի կորուստ: Միւս կողմից, Ատրպէյճանն անգամ Ռուսաստանի աջակցութեամբ չկարողացաւ փոխել առաջին պատերազմից յետոյ ձեւաւորուած ստատուս-քուոն, եւ հաւանաբար չի էլ կարողանալ:

Ընտրութիւններն Ապրիլի 2-ին նշանակելը խորհրդանշական է: Ապրիլի 2-ին Հայաստանում կորուկ շրջադարձ եղաւ: Գրեթէ անյոյս վասալային-զաղութային երկրում, ինչպէս պարզուեց, ինքնիշխանութեան ամուր ծիւղեր են աճում,

որոնք թոյլ տուեցին դիմակայել: Սակայն քամին ուժեղանում է, իսկ պետականութեան արմատները դեռ բաւարար չափով խոր չեն ու պաշտպանութեան կարիք ունեն:

2017 թուականի Ապրիլի 2-ի ընտրութիւնը դրա մասնակիցների մեծամասնութեան համար կերակրատաշտին տեղ ունենալու պարզունակ պայքար կը լինի: Աշխարհում, սակայն, այդ ընտրութիւններից այլ բան են ակնկալում՝ կը յաջողուի՞ ամրացնել ինքնիշխան պետականութեան արմատները, թէ Հայաստանում վերջնականապէս «կոնսենսուս» ձեռք կը բերուի ինքնիշխանութիւնը կերակրատաշտի դիմաց գիշելու հարցում:

Ռուսաստանին հաւատարիմ քաղաքական ուժերն արհեստականորէն շրջանառութեան մէջ են դնում այն թէզը, որ Հայաստանի համար պայքար է գնում «եղբայրական» Ռուսաստանի եւ «թշնամական» Արեւմուտքի միջեւ: Իրականում Հայաստանում պայքար է տեղի ունենում Ռուսաստանի գա-

ղութային քաղաքականութեան եւ Հայաստանի ինքնիշխան բնագոյների միջեւ:

Այդ պայքարը պէտք է առանցքային դառնայ խորհրդարանական ընտրութիւններում: Այդ ընտրութիւնների արդիւնքներին սպասում են ամբողջ աշխարհում: Եւրամիութիւնն ու Հայաստանը պայքամանաւորուել են Ապրիլին ընտրութիւններից յետոյ շրջանակային համաձայնագիր ստորագրել՝ չնայած տեքստը, ինչպէս ասում են, գրեթէ պատրաստ է: Բրիւսելը հաւանաբար կարեւոր է համարում իմանալ, թէ ինչ է ընտրելու Հայաստանը՝ ինքնիշխանութիւն, թէ զաղութացում:

Իրանը նոյնպէս Ապրիլին է նշանակել Հայաստանի հետ ազատ առեւտրի գոտու համաձայնագրի ստորագրումը: Թեհրանը ցանկանում է իմանալ, թէ ինչ կ'ընտրի Հայաստանը:

Ի՞նչ կարող է տեղի ունենալ Ապրիլի 2-ին: Ի՞նչ էլք են ակնկալում ուժի համաշխարհային

կեդրոնները եւ ի՞նչ անսպասելի բան կարող է տեղի ունենալ ընտրութիւններին:

Ընտրութիւններին մասնակցութեան յայտերն արդէն ներկայացուել են, եւ բոլոր ուժերը փորձում են շրջանցել արտաքին քաղաքական «կողմնորոշման» հարցը: Հանրապետական կուսակցութեան գաղափարախօսները յայտարարել են, որ չարժէ արտաքին քաղաքական կողմնորոշման հարցը դարձնել ընտրութիւնների առանցքը, իսկ ընդդիմադիր «Ելք» դաշինքը յայտարարել է, որ ինքնիշխանութեան կողմնակից է եւ գերադասում է չխօսել արտաքին քաղաքական ընտրութեան մասին:

Արտաքին քաղաքականութեան մասին չխօսել չի ստացուի, եւ իւրաքանչիւր կուսակցութիւն ստիպուած է լինելու յստակ ներկայացնել իր տեսլականը տարածաշրջանում եւ աշխարհում Հայաստանի ապագայի վերաբերեալ եւ յատկապէս Ռուսաստանի հետ յարաբերութիւնների տեսլականը: Որտե՞ղ է Մոսկուայի հետ յարաբերութիւնների կարմիր գիծը, որը չի թաքցնում էքսպանսիոնիստական նպատակները եւ Հայաստանն անուանում է իր ազդեցութեան գոտի: Հայաստանի բանակն ինքնիշխան է մնալու, թէ դա էլ են գիշելու «յանուն անվտանգութեան»:

Ապրիլեան ընտրութիւններն իրօք սակրալ են դառնալու: 2016 թուականի Ապրիլի 2-ին Հայաստանն աշխարհի քաղաքական քարտէզին մնացել է որպէս ինքնիշխան երկիր աւելի քան 100 կեանքերի գնով: 2017 թուականի Ապրիլի 2-ին ընտրութիւնները պակաս կարեւոր չեն լինելու, իսկ գինը՝ աւելի բարձր:

«ԼՐԱԳԻՐ»

Սարգսեան-Կարապետեան Խնդիրները Դեռ Նոր Են Չրապարակ Իջնելու

ԱՐԱՍ ԱՄՍՏՈՒՆԻ

Պե՛կ նախագահ Վարդան Յարութիւնեանը տարեկերթեան մամուլի ասուլիսում յայտարարել է, որ Հայաստանի խոշոր հարկ վճարողների կէսը ունեն ստուերային խոշոր շրջանառութիւն, որը կազմում է մօտ 48.8 տոկոս: Յարութիւնեանը յայտարարել է, որ այդ շրջանառութիւնը բերելու են հարկային դաշտ՝ լինի կոշտ միջոցներով, թէ վարչարարութեամբ: Հասկանալի է, որ Պե՛կ նախագահն ինքնին նման յայտարարութիւն անելու համար պէտք է ունենայ քաղաքական աջակցութիւն, այլապէս յայտարարութիւնը չի կարող լուրջ լինել:

Կասկած չկայ, որ Վարդան Յարութիւնեանը լուրջ մարդ է եւ ինքն էլ հասկանում է այդ հանգամանքը: Ըստ այդմ, պէտք է ենթադրել, որ նա ունի նման յայտարարութիւն անելու քաղաքական աջակցութիւն: Նրան այդ աջակ-

ցութիւնը Սերժ Սարգսեանն է յայտնում, թէ՛ վարչապետ Կարէն Կարապետեանը, որի կողմն է հանդիսանում Վարդան Յարութիւնեանը...: Պետական եկամուտների կոմիտէն Հայաստանի իշխանական համակարգում առանցքային կառուցք է, ով տնօրինում է այդ կառուցքը, նա քաղաքական իմաստով բաւական մեծ ազդեցութիւն է ձեռք բերում իշխանական համակարգի վրայ: Այս իմաստով, Պե՛կ-ի նախագահի պաշտօնում սեփական կողմի նշանակումը Կարէն Կարապետեանի համար իհարկէ վարչապետական մեկնարկի քաղաքական եզակի ձեռքբերում էր:

Միւս կողմից սակայն, Սերժ Սարգսեանը որոշակի դադարից յետոյ բաւականին ակտիւացել է եւ այդ տեսակէտից հարց է առաջանում՝ նաեւ Պե՛կ-ի մասով՝ Սարգսեանը միայն պաշտօնն է տուել Կարէն Կարապետեանին, թէ՛ նաեւ որոշումներ կայացնելու իրաւասութիւնը: Որովհետեւ եթէ որո-

շումներ կայացնելու իրաւասութիւնը Սերժ Սարգսեանն այնուհանդերձ պահել է իր ձեռքում, ապա դա նշանակում է, որ քաղաքական աջակցութեան մասով Պե՛կ նախագահը կարող է կանգնել լուրջ խնդիրների առաջ, քանի որ այդ տեսանկիւնից Սերժ Սարգսեանի եւ Կարէն Կարապետեանի յարաբերութիւններում ոչ միայն ոչինչ պարզ չէ, այլ այդ յարաբերութիւններում խնդիրները դեռ նոր են երեւան գալու:

Իհարկէ խոշոր պիւզնէսի ստուերի հարցը անկասկած հանդիսանալու է այդ խնդիրների առանցքային բաղադրիչներից մէկը, ելնելով թէ՛ տնտեսական, թէ՛ քաղաքական նշանակութիւնից: Սակայն հենց այս տեսանկիւնից է, որ բոլորովին պարզ չէ, թէ այդ ստուերի հարցում քաղաքական աջակցութիւնը Պե՛կ-ի վարչա-հրամայական գործունէութեան ինչ «ստատուս-քվո» եւ արդիւնք է ենթարկելու: «ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

Իրական ու կեղծ

ԱՐՄԻՆԵ ՕՅԱՆԵԱՆ

Ինչպէ՞ս կողմնորոշուի հայ ընտրողը, թէ որ ուժն է իրական ընդդիմութիւն, ում ձայն տայ 2017-ին, որպէսզի երկրում իրավիճակ փոխուի:

Ահա՛ մի քանի ամսում իշխանութեան ամենակարկառուն ներկայացուցչից ընդդիմութիւն դարձող Սէյրան Օհանեանը, որի նկատմամբ վերաբերմունքի մէջ էական դերակատարում ունի բանակի հանդէպ հասարակական ակնածանքը: Ահա՛ մի քանի տարում իշխանութեան կարկառուն ներկայացուցչից ընդդիմութիւն դարձած միւս թեկնածուն՝ արտաքին գործերի նախկին նախարար Վարդան Օսկանեանը, որը եւս, պաշտօ-

նաթող լինելով, յայտնուեց ընդդիմութեան դաշտում եւ յաւակնում է առաջ տանել իշխանափոխութեան դրօշը: Ահա, իշխանութեան մէկ այլ գործընկեր՝ Գագիկ Ծառուկեանը, որը թէեւ դեռ չի յայտարարել, բայց, ամենայն հաւանականութեամբ, կը յայտարարի իր վերադարձի մասին եւ ետեւից կը տանի ընչաքաղց ու դժգոհ մի հսկայ գանգուած: Ահա, նոր ձեւաւորուած մի դաշինք, որի անդամներից իւրաքանչիւրին տարբեր առիթներով կասկածել են իշխանութեան հետ ունեցած կապերի մէջ՝ Էդմոն Մարուքեան, Նիկոլ Փաշինեան, ՀՀ նախկին վարչապետ Արամ Սարգսեան: Ահա, ամենաարմատական համարուող ընդդիմութիւն ՀԱԿ-ը, որի ղեկավարն ու

անդամները վերջին տարիներին պարբերաբար կանգնում են գործող իշխանութեան կողքին՝ «4+4+4» ֆորմատով բանակցութիւններ ծաւալում, նամակներ գրում, հանրութեանը կոչ անում ապահովել նախագահի թիկունքը, որպէսզի զարաբաղեան հարցը կարգաւորուի: Ահա, Բաֆֆու «Ժառանգութիւնը», որը նախորդ ընտրութիւններին անհասկանալի մի ցուցակ ներկայացրեց ընտրողին եւ դրա շարքերում տարբեր իշխանական «պրոյեկտներ» տարաւ խորհրդարան:

Հիմա սրանցից ո՞րն է իրական ընդդիմութիւն, ո՞րը՝ կեղծ, ո՞ւմ ձայն տալ եւ ո՞ւմ ջնջել: Եթէ անգամ քաղաքական պրոպէնտներով ակտիւորէն հետաքրքրուած անձինք գլուխ չեն հանում, շարքային քաղաքացին ինչպէ՞ս գլուխ հանի:

«ՀՐԱՊԱՐԱԿ»



ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ
 ՊԱՇՏՏՈՆԱԹԵՐԹ՝
 ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՉՆՉԱԿԵԱՆ
 ԿՈՒՄԱԿՑՈՒԹԵԱՆ
 Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
 ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
 ՎԱՅԵԱՋԱՊԱՅԵԱՆ
MASSIS Weekly
 Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
 1060 N. Allen Ave.
 Pasadena, CA 91104
 Phone: (626) 797-7680
 Fax: (626) 797-6863
 E-Mail: massis2@earthlink.net
 http://www.massisweekly.com
 (USPS 667-310) (ISSN 0744-334X)
 Published Weekly
 Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
 USA \$50.00, \$100.00 (First Class)
 Canada \$125.00 (Air Mail)
 Overseas \$250.00 (Air Mail).
 All payments must be made in US funds & Drawn on US banks.
 Periodicals Postage Paid at Pasadena CA.
 Please Send Address Change To **MASSIS WEEKLY**

Չրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» անալոյսմանօրէն չի բաժնէր հոն արտայայտուող բոլոր միտքերը

www.massispost.com

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Հայաստանում Չկայ Ստուեր, Կայ Զուգահեռ Տնտեսութիւն», Զուրաբեան

Հայ Ազգային Կոնգրէս (ՀԱԿ) խմբակցութեան ղեկավար Լեւոն Զուրաբեանը 2017 թուականից ակնկալում է խաղաղութեան հաստատում: Այս մասին NEWS.am-ի հետ զրոյցում ասել է ընդդիմադիր գործիչը՝ խօսելով 2017-ի իր ակնկալիքները:



ՀԱԿ խմբակցութեան ղեկավար Լեւոն Զուրաբեան

Անդրադառնալով վարչապետի ամենօրեայ վստահեցումներին ու խոստումներին, թէ տնտեսական կեանքում ստուերի ու մենաշնորհների դէմ պայքարի մասով առաջընթաց կը լինի, Զուրաբեանն ասաց. «Գտե՞լ էք Հայաստանում մէկին, որը ասել է՝ այ, արդէն մենք տեսնում ենք, որ մենաշնորհները Հայաստանում չկան կամ բաւականին նահանջել են: Ինչ-որ մէկը նման բան ասե՞լ է»:

Ընդդիմադիր գործիչ խօսքով, Հայաստանում դասական ստուեր գոյութիւն չունի, կայ գուգահեռ տնտեսութիւն, որը ենթարկւում է իշխանական բուրգի վերահսկողութեանը:

«Հայաստանում իրականում ստուեր գոյութիւն չունի, ստուերը այն տնտեսութիւնն է, որը թաքնուում է պետական մարմինների վերահսկողութիւնից եւ պետութիւնը չի կարողանում որեւէ կերպ վերցնել այդ տնտեսական ակտիվութիւնը վերահսկողութեան տակ, դա է ստուերը: Այդ իմաստով,

Հայաստանում դասական ստուեր գոյութիւն չունի: Գոյութիւն ունի գուգահեռ տնտեսութիւն, որը ենթարկւում է այս իշխանական բուրգի վերահսկողութեանը, այսինքն՝ իրականում ՀՀ տնտեսութիւնը երկու գուգահեռ մասի է բաժանուում, մէկը պաշտօնապէս արձանագրուող տնտեսութիւնը, միւսը իշխանական բուրգի կողմից վերահսկուող, բայց շարձանագրուող տնտեսութիւնը: Այսինքն ուշալ ստուերը շատ փոքր է, նկատի ունեմ՝ այն տնտեսական ակտիվութիւնը, որը ընդհանրապէս չի վերահսկուում պետական իշխանութեան կողմից», - ընդգծեց ՀԱԿ խմբակցութեան ղեկավարը:

Իշխանութիւնները Մտադիր են

Ընտրութիւնները Անցկացնել Առանց Դասական Կեղծիքների

«Առաջին Լրատուական»-ի հետ զրոյցում անդրադառնալով նախորդ վերջին ընտրութիւնների ժամանակ կատարուած ընտրակեղծիքներին եւ հարցին, թէ ընտրատեղամասերի մօտ՝ դրսում տեղադրուած տեսախցիկների առկայութիւնն արդե՞ք բաւարար է քառու վերահսկելու կամ ընտրակեղծիքները ֆիքսելու համար, «Իրագեկ քաղաքացիների միաւորում» ՀԿ ծրագրերի համակարգող Դանիէլ Իոսանիսեանը նշեց. «Եթէ համեմատենք 2013թ. համապետական ընտրութիւնների հետ, ապա սահմանադրական հանրաքուէի ժամանակ ընտրատեղամասերի ներսում աւելի շատ խախտումներ եղան, իսկ 2015-ը ընտրակեղծիքների գազաթն էր»:

Երբ որ ասում ենք ընտրատեղամասերից դուրս տեղի ունեցող ընտրակեղծիքներ, իրականում նկատի չունենք տեղամասի մուտքի մօտ, այնտեղ առաւելագոյնը կարող են կուտակումներ լինել: Նոր Ընտրական օրէնագրքի պարագայում նկատի ունենք ոչ թէ դասական կեղծիքները, երբ թիւը փոխուում է այլ թիւով, կամ անձը քուէարկում է այլ անձի փոխարէն,

այլ այն, որ ամբողջ պրոցեսն է աղակաղուում եւ, այնուամենայնիւ, իշխանութիւններն ապահովում են հանրային կարծիքը չարտայայտող արդիւնք, բայց տեղի էի ունենում անմիջական կեղծիք: Դա տեղի է ունենում այն ժամանակ, երբ ընտրութիւնների վերաբերեալ գուգահեռ «իրականութիւն» են ստեղծում՝ խառնելով մեծամասնական եւ համամասնական ընտրակարգերը, ստեղծելով բոնուսային համակարգեր եւ այլն:

Նոր Ընտրական օրէնագրքը լայն հնարաւորութիւններ է բացում թէ՛ քաղաքական առքուածառքի համար, թէ՛ բոնուսների եւ այլ հակաժողովրդավարական մեխանիզմների համար: Ընդդիմութիւնում հիմնականում քաղաքական գործիչներ են, եւ նրանք ստիպուած են լինելու, մրցել թաղային հեղինակութիւնների հետ: Իրականում տեղամասերից դուրս տեսանկարահանումը, չեմ կարծում, որ շատ ուժեղ ազդեցութիւն կ'ունենայ ընտրութիւնների վրայ. իշխանութիւնները մտադիր են համապետական ընտրութիւնները առանց դասական ընտրակեղծիքների իրականացնել:

Վարչապետը Հրաժարուել է Ցուցակից

Մամուլում տեղեկութիւններ են տարածուել, թէ ՀՀ-ում ոչ մի կերպ չեն կարողանում լուծել ՀՀ վարչապետ Կարէն Կարապետեանի՝ Հայաստանում վերջին 5 տարում մշտական բնակութեան վերաբերեալ տեղեկանքի հարցը, որն անհրաժեշտ է ՀՀ ցուցակում ընդգրկուելու եւ պատգամաւորութեան թեկնածու առաջադրելու համար: Նշուում է, որ կայ նախնական պայմանաւորուածութիւն, որ վարչապետը եւ ՀՀ նախագահ, ՀՀ պաշտօնը Սերժ Սարգսեանը կուսակցութեան նախընտրական ցուցակում չեն լինի:

Ազգային ժողովի ՀՀԿ խմբակցութեան ղեկավար Վահրամ Բաղդասարեանն անդրադարձել է մամուլում տեղ գտած հրապարակմանը: «Արմենպրես»-ի հետ զրոյցում Վահրամ Բաղդասարեանն ընդգծել է, որ նման քննարկում կուսակցութիւնում չի եղել: «Ես նման տեղեկութիւն չունեմ, մենք այդ մասին որեւէ քննարկում չենք ունեցել: Դա ընդամենը լրատուական հետաքրքրութեան դրսեւորում է», - նշել է Բաղդասարեանը:

Արմէն Մարտիրոսեան Կը Փորձէ Արդարացնել Վարդան Օսկանեանին

«Ժառանգութիւն» կուսակցութիւնը դեռ չէ որոշած՝ ինչպէս պիտի մասնակցի Ապրիլ 2-ի Աժ ընտրութիւններուն: «Միայնակ մասնակցելու դէպքում մինիմալ խնդիրը կը լուծենք՝ «Ժառանգութիւնը» Աժ-ում կը լինի, սակայն դա երկրի համար ոչինչ չի տայ: Միայնակ գնալով հնարաւոր չէ երկրում արմատական փոփոխութիւններ իրականացնել, իշխանափոխութիւն իրականացնել», - ըսաւ «Ժառանգութեան» փոխնախագահ Արմէն Մարտիրոսեան:



Արմէն Մարտիրոսեան «Ժառանգութեան» փոխնախագահ

«Ժառանգութիւնը» ունի սկզբունքներ, որոնց ապահովման պարագային պատրաստ է համագործակցութեան:

Մարտիրոսեան չէ բացառած նաեւ Վարդան Օսկանեանի ղեկավարած «Համախմբում» կուսակցութեան հետ համագործակցութիւնը: Ինչ կը վերաբերի Օսկանեանի առնչութեանը՝ Մարտի 1-ի սպանդին հետ, ան ըսած է. «Վարդան Օսկանեան կրակելու հրաման, բարեբախտաբար, չի տուել, նա իշխանութեան մաս է եղել, իր յայտարարութիւնը միանշանակ չի ընդունուել: Իշխանական թիմերում գտնուած մարդիկ կատարել են քայլեր, արել են խօսքեր, որոնք հանրութեան կողմից ընդունելի

չեն եղել: Նրան կողուպցիայի մէջ չեն մեղադրել: Ակնյայտ է, որ Վարդան Օսկանեանը իր կրթութեամբ, ինթելեքթով, իր աշխատանքային փորձով առանձնանում է որոշակիօրէն»:

Իր կարգին «Համախմբում» կուսակցութիւնը իր վարչութեան հերթական նիստին որոշած է ստեղծել բանակցող խումբ, խորհրդակցութիւններ կազմակերպող քաղաքական, հասարակական ուժերու եւ այլ շրջանակներու հետ:

2016-ին Հայաստանը Շարունակեց Հսկայական Պարտքեր Կուտակել

Հեռացող վարչապետ Յովիկ Աբրահամեան ոչ միայն գոհ էր տնտեսական արդիւնքներէն, այլեւ՝ Սեպտեմբերին կառավարութեան նիստին յայտարարեց՝ Հայաստանը անցած է որակապէս նոր տնտեսական աճի:

Սակայն, ընդամենը վեց օր անց՝ արդէն նոր վարչապետ Կարէն Կարապետեան ճիշդ հակառակ համոզմունքը յայտնեց: «Տնտեսութեան վիճակը չափազանց ծանր է», - Ազգային ժողովի ամպիոնէն յայտարարեց «Գազպրոմի» նախկին բարձրաստիճան կառավարիչը:

Հակասութիւնները այսքանով չաւարտեցան շաբաթներ անց իշխող Հանրապետականի համագումարին, նախագահ Սերժ Սարգսեան հանրութեանն իրազեկեց՝ 2007-2015 թուականներին Հայաստանը գրանցած է գրեթէ 30 տոկոսի տնտեսական աճ, իսկ բնակչութեան բարեկեցութիւնը էականօրէն աճած է: Ազգային վիճակագրական ծառայութեան եւ ֆինանսներու նախարարութեան տուեալներով, եթէ 2008-ի տնտեսական ճգնաժամէն առաջ երկրի համախառն ներքին արդիւնքը կազմած էր 11,9 միլիարտ տոլար, իսկ պետական պարտքը 1,9 միլիարտ տոլար էր, ապա 2015-ը փակեցինք 10,5 միլիարտ տոլարի ՀՆԱ-ով, իսկ պետական պարտքը աւելցած էր 2,6 անգամ՝ կազմելով 5 միլիարտ 71 միլիոն տոլար:

Չնայած իշխանութիւններու յայտարարած տնտեսական աճին, երկիրը շարունակեց հսկայական պարտքեր կուտակել: Ըստ ֆինանսներու նախարարի, 2016-ի պետական պարտքը աւելցած է մօտ մէկ միլիարտ տոլարով՝ հասնելով 5 միլիարտ 905 միլիոնի: Պաշտօնական տուեալներով, 2016-ի տնտեսութիւնը աճած է ընդամենը 0,5 տոկոսով: Հետեւաբար, տարուան վերջը մեր ՀՆԱ-ն կազմած է 10,7 միլիարտ տոլար, այսինքն՝ դեռ չենք հասած նախաճգնաժամեան մակարդակին:

Չնայած իշխանութիւններու յայտարարած տնտեսական աճին, երկիրը շարունակեց հսկայական պարտքեր կուտակել: Ըստ ֆինանսներու նախարարի, 2016-ի պետական պարտքը աւելցած է մօտ մէկ միլիարտ տոլարով՝ հասնելով 5 միլիարտ 905 միլիոնի: Պաշտօնական տուեալներով, 2016-ի տնտեսութիւնը աճած է ընդամենը 0,5 տոկոսով: Հետեւաբար, տարուան վերջը մեր ՀՆԱ-ն կազմած է 10,7 միլիարտ տոլար, այսինքն՝ դեռ չենք հասած նախաճգնաժամեան մակարդակին:

«Քառօրեայ Պատերազմի Տարեկիցին Ընտրութիւններու Օր Նշանակելը Անբարոյականութիւն է», - «Ազատամարտիկներու Դաշինք»

Քառօրեայ պատերազմի տարեկիցին ընտրութիւններուօր նշանակելը անբարոյականութիւն է: Այս մասին յայտարարութիւն տարածած է «Ազատամարտիկներու դաշինքի» վարչութիւնը: Յայտարարութեան մէջ ըսուած է.

«Հայրենակիցներ՝ գործող վարչախումբը իր ապագային քաղաքականութեան արդիւնքում հասցրել է լուրջ հարուած հասցնել մեր ազգային արժեհամակարգին, ոտնահարելով ժողովրդի կողմից սրբութիւններ ընկալուող յիշատակի օրեր:

Այժմ եւս, հերթական անգամ, երբ ժողովուրդը սոցն թուականի Ապրիլի 2-ին պէտք է ցաւով նշէր «ապրիլեան քառօրեայ պատերազմի» ժամանակագրուած հարիւրից աւելի հայորդիների գոհուելու տարեկիցը, գործող վարչախումբը յայտարարել է ազգային ժողովի ընտրութիւնների օր, դրանով մէկ անգամ եւս փաստելով իր ապագային բնոյթը: Անկախ նրանից, թէ ինչ հիմնաւորումներով են ամբարայնուած հենց այդ օրը Աժ ընտրութիւն անցկացնելու որոշումը, մենք անյարիր, աւելին՝ անբարոյական ենք համարում գոհուած հայորդիների յիշատակի օրը նման համապետական միջոցաւման անցկացումը»:

ԼՈՒՐԵՐ

Ատրպեյճան ԵՆԻՍՎ Ազդեցիկ Պաշտօնեաներուն Կաշառք Փոխանցած Է՝ Բրիտանական Ընկերութիւններու Միջոցով

«Բրիտանական առևտուական չորս ընկերութիւններ առնչութիւններ ունին Ատրպեյճանի կողմէ եւրոպական կառուցներու ներկայացուցիչներուն տրուած կաշառքներուն հետ», - պնդած են Լոնտոն լոյս տեսնող The Observer շաբաթաթերթի լրագրողները:

Հեղինակաւոր Guardian պարբերականի հետ գործող այս թերթը հետաքննած է 2013 թուականի իրադարձութիւնները, երբ պաշտօնական Պաքուին, լրբիստական յամառ ջանքերու շնորհիւ, յաջողուեցաւ տապալել Եւրոպայի խորհուրդին մէջ շրջանառուող այն բանաձեւերէն մէկուն ընդունումը, որ նուիրուած էր Ատրպեյճանի քաղաքանտարկեալներու շուրջ ստեղծուած կացութեան:

The Observer-ի պնդմամբ, գերմանացի սոցիալ-դեմոկրատ Բրիտթորֆըր Շտրասերի մշակած բանաձեւի տապալման գործին առանցքային դերակատարութիւն ունեցած է Եւրոպայի խորհուրդի խորհրդարանական վեհաժողովի խոշորագոյն խմբակցութիւնը՝ Եւրոպայի ժողովրդական կուսակցութիւնը եւ անոր այն ժամանակուան ղեկավար՝ Իտալացի պատգամաւոր Լուքա Վոլոնթէ:

Յիշեցնենք՝ Եւրոպայի աջ պահպանողական քաղաքական ուժերը միաւորող այս կառուցին անդամակցած են հայաստանեան երեք կուսակցութիւններ՝ Հանրապետականը, «Օրինաց երկիրն» ու «Ժառանգութիւնը»:

The Observer-ի տեղեկութիւններով, Միլանի դատախազութիւնը արդէն իսկ հետաքննած է Լուքա Վոլոնթէի կողմէ 2 միլիոն 390 հազար եւրոյի կաշառք ստանալու փաստը: Իտալացի քաղաքական գործիչը նոյեմբերին RAI 3 հեռուստաընկերութեան եթերին հեռարձակուած «Նախարարին դիւանադիտութիւն» վերնագրուած ֆիլմին մէջ պնդած է, թէ այդ գումարը ստացած է ատրպեյճանցի պատգամաւոր Էլհան Սուլէյմանովէն՝ «գիւղատնտեսութեան ոլորտին մէջ ցուցաբերած խորհրդատուական ծառայութիւններու փոխարէն»:

The Observer-ի լրագրողները պնդած են, որ Սուլէյմանով սերտ յարաբերութիւններ ունի Ատր-

պեյճանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ: Լոնտոնեան պարբերականը, սակայն, պնդած է, որ ատրպեյճանական կողմը ԵՊԿ ազդեցիկ գործիչին կաշառքը փոխանցած է բրիտանական չորս ընկերութիւններու միջոցով: Անոնք են՝ Լոնտոնի մերձակայքը գտնուող Փոթերս Բար քաղաքում գրանցուած LCM Alliance-ը, սքոթլանտական Կլազկո գործող Hilux Services եւ Polux Management ընկերութիւնները, ինչպէս նաեւ պլըմինկհեմեան Metastar-ը:

The Observer-ի տեղեկութիւններով, չորս ընկերութիւնները իրենց հիմնական գործողութիւնները իրականացուցած էին օֆշորային գոտիներու միջոցով, իսկ Վոլոնթէի անուան շուրջ ծագած խայտառակութենէն յետոյ ընդհանրապէս լուծարուած են: Թերթի պնդմամբ, Ատրպեյճանի քաղաքանտարկեալներու առկայութեան մասին վկայող բանաձեւի տապալումէն յետոյ հնարաւոր դարձաւ նոր շունչ հաղորդել նաեւ «Թրանս-Ատրիաթիկ» խողովակաշարի՝ TAP-ի շինարարութեան բանակցութիւններուն:

The Observer-ը մէջբերած է նաեւ բրիտանացի բնապահպան Էմմա Հիւզի խօսքերը, որ պնդած է, թէ «Թրանս-Ատրիաթիկ» գազատարը, որուն շնորհիւ Եւրոպայ յոյս ունի թուլացնել իր կախումը Եւրոպայի ընդհանրական կազմէն, իրականին մէջ պիտի ծառայէ տրամադծրէն հակառակ նպատակին:

The Observer-ի թղթակիցները յաջողած են նաեւ պարզել, որ Ատրպեյճանի եւ Եւրոպական կառուցներու միջեւ առկայ կաշառակերութեան ծրագրերով ներգրաւուած բրիտանական ընկերութիւնները կապեր ունին նաեւ Ռուսիոյ ներկայացուցիչներու հետ:

Թերթը՝ վկայակոչելով Լաթուիոյ դատական համակարգի հրապարակած տուեալները, պնդած է, որ Լուքա Վոլոնթէյի շուրջ ծագած խայտառակութեան մէջ ներգրաւուած ընկերութիւններէն մէկը վերահսկած էր նաեւ Armut Services կառուցը, որուն միջոցով հնարաւոր եղած էր շուրջ 230 միլիոն ամերիկեան տոլար յափշտակել Ռուսիոյ պետական պիւտձէէն:

«Պոլսոյ Պատրիարքի Ընտրութիւններուն Համար Թոյլտուութեան Կարիք Չունինք», - Կարօ Փայլան

«Ես մշտապէս ըսած եմ, որ մենք կարիք չունինք թուրքիոյ կառավարութենէն թոյլտուութիւն ստանալու՝ Պոլսոյ պատրիարքի ընտրութիւններուն համար»,- յայտարարած է թուրքիոյ խորհրդարանի ժողովրդագրեմոկրատական կուսակցութեան պոլսահայ պատգամաւոր Կարօ Փայլան:

«Բայց պատրիարքի փոխանորդ Արամ Աթեշեանը եւ որոշ հայեր դէմ են անոր: «Ես կ'ըսեմ ոչ, մենք պարզապէս պէտք է անոնց տեղեկացնենք, որ օրը որոշուած է, ընտրութիւններ պէտք է ըլլան», - ըսած է Կարօ Փայլան, շարունակելով. «Ան (Աթեշեան) գիտէ, որ այս ընթացքին թուրքիա թոյլ չի տար: Եւ օգտագործելով առիթը՝ ան կը



Ֆորձէ մի քանի ամիսով կամ տարիով շարունակել զբաղեցնել պատրիարքի աթոռը»:

Փորձագետները Կը Վերլուծեն Ապրիլեան Պատերազմի Դասերը

«Ապրիլից բխում են երկու կարեւոր զարգացումներ, առաջինը, դուր է գալիս մեզ, թէ՛ ոչ, Ատրպեյճանին առաջին անգամ յաջողութեամբ գրաւել տարածքներ, երկրորդը, որն աւելի շատ ներքին կարեւորութիւն ունի, բացայայտումն էր, որ կոռուպցիան ազգային անվտանգութեան համար սպառնալիք է հանդիսանում, ու այժմ դա աւելի մեծ նշանակութիւն ունի, այն ապրիլին կայանալիք ընտրութիւններին առաջ նաեւ ձեւաւորում է բանավէճի օրակարգ», - ըսաւ Տարածաշրջանային հետազոտութիւններու կեդրոնի ղեկավար Ռիչըրտ Կիրակոսեան՝ պատասխանելով հարցին, թէ ի՞նչ դասեր կրնար քաղել Հայաստանը ապրիլեան պատերազմէն:

Քաղաքագէտ Ալեքսանդր Իսքանտարեանի համոզմամբ, ապրիլեան պատերազմը ցոյց տուաւ, որ հարցը ռազմական ճանապարհով լուծելն անհնար է: «22 տարի Ատրպեյճանը պատրաստուած էր պատերազմին: Ես իհարկէ համաձայն եմ Ռիչըրտի հետ՝ շատ դասեր եղան եւ Հայաստանն ու Լեռնային Ղարաբաղը փորձում են շտկել այն, ինչ պէտք է շտկել: Ընդհանուր առմամբ գլխաւոր դասը ես այսպէս

կը ձեւակերպէի՝ հաւասարակշռութիւն կայ, հարցը ռազմական ճանապարհով լուծելը ստացուած է՝ անհնար է»,- ասաց Իսքանտարեան:

Ապրիլեան պատերազմի ընթացքին, ըստ քաղաքական մեկնաբան Յակոբ Պատալեանի. «Եթէ չլինէր անմիջականօրէն գինուորների խիզախութիւնը, կամաւորների, հասարակութեան աջակցութիւնը, սպանները՝ առաջին գծում կանգնած, ես կարծում եմ, որ պատերազմի հետեւանքը կարող էր շատ աւելի ծանր լինէր Հայաստանի համար: Եւ այս առումով, գլխաւոր դասը պէտք է լինի այն, որ ռազմաքաղաքական էլիտան իր՝ թէ՛ կառավարման արդիւնքով, եւ թէ՛ ընդհանրապէս մտածողութեան որակներով պէտք է մի քիչ աւելի համարժէք դառնայ այն մարտահրաւէրներին, որ կանգնած են Հայաստանի առաջ նաեւ ապրիլեան պատերազմից յետոյ, որովհետեւ ի վերջոյ, մենք սկսում ենք ինչ-որ իմաստով երկրորդ ցիկլը, եւ ակնյայտ է, որ Ատրպեյճանը շարունակելու է պատրաստուել մի նոր ապրիլի՝ դա կը լինի տասը օր յետոյ, տասը տարի յետոյ, թէ քսան տարի յետոյ», - ըսաւ Պատալեան:

Ղարաբաղ Այցելած Լրագրողի Գործը

Շարունակուած էջ 1-էն

Թիւն ունեցող Լաբշինին:

Իսրայէլեան մամուլը գրած է, թէ Լաբշինի արտայանձնման հարցը որոշուած է, եւ Իսրայէլի դիւանագիտական աղբիւրները Պաքուի հետ բանակցութիւններուն որեւէ արդիւնքի չեն հասած: Ալեյին, լրագրողի հարազատները իսրայէլեան Haaretz եւ Jerusalem Post պարբերականներուն պատմած են, թէ Պելաուս անվտանգութեան ուժերը հոգեբանական ու ֆիզիքական ճնշում գործադրած են անոր նկատմամբ՝ ստիպելով ստորագրել արտայանձնման համաձայնագիրը:

«Ատրպեյճանական կողմը կ'ուզէ Լաբշինի գործը նախադէպ դարձնել», - Haaretz-ին ըսած է Իսրայէլի արտաքին գործոց նա-

խարարութեան պաշտօնական ներկայացուցիչը՝ աւելցնելով. «Այս միջադէպը կրնայ լուրջ ճախողում դառնալ երկկողմ յարաբերութիւններուն մէջ»:

Ալեյի շուտ հաղորդուած էր, որ Իսրայէլ պաշտօնապէս խնդրած է Պելաուս իշխանութիւններէն Լաբշինին Ատրպեյճանին շարտայանձնել, սակայն Պաքուի պաշտօնեաները յստակ փոխանցած են, որ մտադիր չեն իրենց պահանջներէն հրաժարիլ:

40-ամեայ Լաբշին ծնած է Մոսկուա, քսան տարի առաջ Իսրայէլ տեղափոխուած, ծառայած է այդ երկրի զինուած ուժերուն մէջ:

Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան խօսնակը տեղեկացուցած էր, թէ պաշտօնական Երեւանը կը զբաղի ձեռքալուծուած բլոգըրի հարցով:

Թուրքիոյ Հայ Համայնքէն Շատեր

Շարունակուած էջ 1-էն

օրէնքներ այսօր չեն գործեր»:

Թուրքիոյ խորհրդարանի հայ պատգամաւորներու մասին խօսելով Էստուկեան ըսած է. -

«Ալեյի քան մէկ տարի է, որ թուրքիոյ պատմութեան մէջ առաջին անգամ խորհրդարանէն ներս երեք հայ պատգամաւոր կան, երեք տարբեր կուսակցութիւններէ: Անոնք խորհրդարանին մէջ չեն՝ հայ համայնքը ներկայացնելու համար, այլ անհրաժեշտ ձայները հաւաքելու միջոցով: Հետեւաբար, այդ անոնք հայ պատգամաւորներ են, հայկական ծագում ունին, բայց իրենց պատասխանատուութիւնը ու գործունէութեան դաշտը ալեյի բարձր է, քան միայն հայ համայնքին ներկայացնելը: Չեմ կրնար երեքին ալ հաւասար գնահատական տալ, քանի որ Մարգար Եսայեանը իշխանութեան կուսակցութեան պատգամաւորն է եւ իր ձայնը շատ

հազուադէպ կը լսուի, բայց միւս կողմէ Կարօ Փայլանն ու Սելինա Տողանը, որոնք ընդդիմադիր ուժերէն են, անոնց ձայնն աւելի լսելի է, ալեյի ակտիւ մասնակցութիւն ունին խորհրդարանին եւ ելոյթներ կ'ունենան: Այս երկու գործիչները մեծ ծաւալի աշխատանք կ'իրականացնեն, բոլոր հայերը կը գնահատեն անոնց աշխատանքը եւ քաղաքական գործունէութիւնը»:

«Չմոռնանք բայց, որ թուրքիոյ մէջ քաղաքականութեան մէջ ըլլալը շատ դժուարութիւններ ունի: Յուլիսեան ղեկավարէն յետոյ վտանգաւոր է նաեւ պատգամաւորներուն համար, որովհետեւ 13 հատը արդէն կալանքի տակ են: Այս տեսանկիւնէն, Փայլանի եւ Տողանի գործունէութիւնը մէկ կողմէ կը մտահոգէ հայ համայնքին, միւս կողմէ՝ հպարտութիւն կը ներշնչէ»,- եզրակացնելով ըսած է «Ակօսի» խմբագիր Բագրատ Էստուկեան:

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎՍՏԱՅԵԼԻ ԱՂԲԻՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

Վատիկանի Գաղտնի Արխիվներու Հիման Վրայ Գիրք կը Պատրաստուի

Վատիկանի գաղտնի արխիվներուն մէջ հետազոտութիւն իրականացնող Վալենթինա Վարդուհի Կարախանեանը հաւաքագրած է տեղեկութիւններ այն մասին, թէ ինչպէս Հռոմի Պենետրաթոս XV Պապի նուիրակը տեղեկացած է Հայոց ցեղասպանութեան մասին եւ փորձած է դադարեցնել զայն: Հետազոտողը Rome Reports-ին պատմած է, որ պատրաստուող գրքի գլխաւոր դերակատարներէն է Հռոմի Պապի ներկայացուցիչ, քարտինալ Անկէթո Մարիա Տոլչի, որ Հայոց ցեղասպանութեան տարիներուն փորձած է ռազմականացնել Կոստանդնուպոլսոյ դիւանագիտական ջոկատը, դատապարտած է կատարուող դէպքերն ու թէպէտ առանց յաջողութեան, հասած է նոյնիսկ մինչեւ սուլթանը:



Քարտինալ ԱՆԿԵԹՕ Մարիա ՏՈԼՉԻ

ների, գլխաւոր վեզիրի եւ սուլթանի հետ: Նախօսել է Պապի եւ Սուրբ Աթոռի անունից, քանի որ վստահ էր, որ Հռոմի Պենետրաթոս XV պապը ցանկանում էր օգնել եւ փրկել այս ժողովրդին»,- յայտնած է Կարախանեան:

Վատիկանի գաղտնի արխիվէն գտած նիւթերուն մէջ կան այդ տարիներուն արձանագրուած փաստեր սեփական տուններէն վտարուած քրիստոնեաներու ոչնչացման վերաբերեալ: «Որոշ տարածքներում նրանք կոտորուում էին, միւսները տարհանուում էին անյայտ ուղղութիւններով՝ ճանապարհներին թողնուելով մահուան: Կային մայրեր, ովքեր անզամ վաճառում էին սեփական երեխաներին՝ նրանց մահուանից պաշտպանելու նպատակով»,- պատմած է Վալենթինա Կարախանեան: Ան նշած է, որ Հռոմի Պապի պատուիրակը գիտակցած է, որ դէպքերը ուղղուած են ոչ թէ միայն հայերուն, այլ այդ տարածքին մէջ բնակող քրիստոնեաներու դէմ:

«Մենք փորձել ենք դասաւորել փաստաթղթերն աչնպէս, որ դրանք իրենցով արդէն փաստեն հայերի կոտորածի մասին: Գրքի դերակատարների շարքում են հայեր, եպիսկոպոսներ, նուիրակներ եւ դեսպաններ, ովքեր ապրել են կամ ակնատեսան են եղել 20-րդ դարի առաջին ցեղասպանութեանը», - նշած է Վալենթինա Կարախանեան: Ան կը պատմէ, որ Վատիկանը այդ տարիներուն հնարաւորն ու անհնար ամէն բան ըրած է, քանի որ Նուիրակը հանդիպած է նոյնիսկ անոնց հետ, որոնք դուրս են դիւանագիտական շրջանակէն: «Պատուիրակը իրաւունք չի ունեցել դիմել շատ մարմիններին: Սակայն նա գնացել է եւ ցոյց է տուել պատուիրակութեան մասնաւոր փաստաթղթեր, քանի որ սուլթանին համեմատ համար անհրաժեշտ էր ցոյց տալ Հռոմի Պապի ստորագրութիւնը: Նա հանդիպել է նախարար-

ԱԱԾ-ն Կանխել է Թուրքիայից Խոշոր Չափերով Թմրամիջոցների Ներկրումը Հայաստան

ՀՀ Ազգային անվտանգութեան ծառայութեան կողմից իրականացուած օպերատիւ-հետախուզական միջոցառումների արդիւնքում կանխուել է Թուրքիայից մաքսանենգ ճանապարհով առանձնապէս խոշոր չափերով թմրամիջոցների ներկրումը Հայաստան:



Ինչպէս «Արմենպրես»-ին տեղեկացրին ՀՀ ԱԱԾ մամուլի կեդրոնից, ձեռքբերուած նախնական տուեալների համաձայն՝ ՀՀ քաղաքացի Ա. Հ.-ն, 2016 թ. Դեկտեմբերի 31-ից գտնուելով Թուրքիայի Հանրապետութեան տարածքում, իւրացնելու նպատակով ապօրինի ձեռք է բերել առանձնապէս խոշոր չափերով՝ «հերոյին» ու «մեթամֆետամին» տեսակի թմրամիջոցների խմբաքանակ եւ «Ստամպուլ-Երեւան» չուերթով տեղափոխել Հայաստան: 2017թ. Յունուարի 3-ին «Զուարթնոց» օդանավայանում մաքսային հսկողութեան «կարմիր ուղին» հատելուց անմիջապէս չետոյ վերոյիշեալ թմրամիջոցները յայտնաբերուել են ՀՀ ԱԱԾ աշխատակիցների կողմից:

Առերեւոյթ յանցագործութեան դէպքի առթիվ յարուցուել է քրէական գործ՝ ՀՀ քրէական օրէնսգրքի 267.1-րդ յօդուածի 4-րդ մասի 1-ին կէտով եւ 266-րդ յօդուածի 3-րդ մասի 2-րդ կէտով (իրացնելու

նպատակով առանձնապէս խոշոր չափերով թմրամիջոցներ ապօրինի ձեռք բերելը, պահելը, փոխադրելը եւ ՀՀ պետական սահմանով առանձնապէս խոշոր չափերով թմրամիջոցների մաքսանենգութիւն կատարելը): Ա. Հ.-ն ձերբակալուել է, կատարուած է նախաքննութիւն: Միջոցներ են ձեռնարկուած ենթադրեալ յանցակիցներին բացառապէս ուղղութեամբ:

Ծանուցում. Յանցագործութեան համար մեղադրուողը համարուած է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցուած չէ օրէնքով սահմանուած կարգով՝ դատարանի օրինական ուժի մէջ մտած դատավճռով:

Կանանց Իրաւունքներուն Համար Պայքարը Օսմանեան Կայսրութեան մէջ Հայ Կանանց Շնորհիւ Սկսած է Թուրք Փրոֆեսոր



Թուրքիոյ Տրապիզոն քաղաքին մէջ կայացած է կանանց իրաւունքներուն թեմայով գիտաժողով: Գիտաժողովի ընթացքին ելոյթ ունեցած է Թուրքիոյ «Գիրեսուն» համալսարանի Հաղորդակցութեան բաժանմունքի ռատիո եւ հեռուստատեսութեան ամպլիոնի վարիչ փրոֆեսորը Հիւլէա Ուղուր Թանրօվերը՝ ներկայացնելով, թէ ինչպէս եւ երբ Թուրքիոյ մէջ սկսած է կանանց իրաւունքներուն համար պայքարը: Այս մասին կը հաղորդէ Ermenihaber.am-ը՝ վկայակոչելով թրքական «Guncbakis» լրատուական կայքը:

մինչեւ հանրապետական շրջանը: Օսմանեան Կայսրութեան ժամանակ? Կանայք աւելի շատ պայքարած են իրենց իրաւունքներուն համար: Օսմանեան շրջանին, յատկապէս հայ կանայք, այդ պայքարին մէջ ստանձնած են մեծ դեր», - ըսած է փրոֆեսորը:

Անդրադառնալով 1923-ին Թուրքիոյ Հանրապետութեան հռչակումէն ետք կանանց իրաւունքներուն համար պայքարին՝ փրոֆեսորը նշած է, որ ժամանակակից ընկալումով, կանանց իրաւունքներուն համար պայքարը կը կապուի նոյնինքն հանրապետական շրջանին հետ:

Փրոֆեսորը ընդգծած է, որ կանանց իրաւունքներուն համար պայքարը Օսմանեան Կայսրութեան մէջ սկսած է հայ կանանց շնորհիւ: Ըստ Թանրօվերի՝ օսմանեան շրջանին կանանց իրաւունքները կը պաշտպանէին հայ կանայք, իսկ Թուրք կանայք անոնցմէ ստրկած են պաշտպանել իրենց իրաւունքները: «Մենք մեր իրաւունքներուն համար պայքարը սկսած ենք դեռ

«Կ'ըսեն՝ քեմալականները տուած են կանանց իրաւունքները: Հաւանաբար, հանրապետութեան հռչակումէն ետք կանանց աւելի դիւրին տրուեցան որոշ իրաւունքներ, սակայն անկէ ետք, յատկապէս 1960-ականներէն սկսեալ, Թուրքիոյ մէջ կանանց իրաւունքներուն համար մեծ պայքար սկսած է», - ընդգծած է փրոֆեսոր Թանրօվերը:

Սերժ Սարգսեան Պարգևատրած է Պատգամաւոր Զարուհի Փոստանճեանին Հայիոյաժ Ոստիկանապետին

2016-ի վերջին օրերուն նախագահ Սերժ Սարգսեան ոստիկանութեան գործերու հրամանատար, կեներալ-լեյտենանտ Լեւոն Երանոսեանին պարգևատրեց «Հասարակական կարգի գերազանց պահպանման համար» շքանշանով:

ազդեցիկ ըլլար, իշխանութիւնը չէր պարգևատրէր յուլիսեան իրադարձութիւններու ժամանակ ոստիկանութեան գործողութիւնները ղեկավարած եւ հանրութեան քննադատութեան արժանացած ոստիկանին: Իշխանեան նաեւ յիշած է՝ երբ Սարի թաղին մէջ բազմաթիւ քաղաքացիներ բերման ենթարկուեցան, նաեւ վնասուածքներ ստացան, Երանոսեանը անժամկէտ արձակուրդ ուղարկուեցաւ:

Աւետիք Իշխանեան Երանոսեանի պարգևատրումը որակեց ապտակ հասարակութեան: Հանրապետական Յակոբ Յակոբեան, համակարծիք չէ ոչ իրաւապաշտպանի, ոչ ալ Զարուհի Փոստանճեանի հետ: Ոստիկանութեան գործը, ըստ անոր, հասարակական կարգի պահպանումն է, ինչ որ Երանոսեան ըրած է յուլիսեան ցոյցերը ցրելու ժամանակ: Յակոբեան նաեւ բացատրած է, թէ ինչու ոստիկանութեան գործերու հրամանատարը հայհոյած է Զարուհի Փոստանճեանին՝ «Պատգամաւոր, կամ մինիստր, կամ քաղաքացի, կամ լրագրող, կապ չունի, եթէ կարգ է խախտել: Դա իրաւական նորմ է, բարոյական նորմ է: Լեւոն Երանոսեանը, որպէս ոստիկան, իր բոլոր պարտականութիւնները կատարել է»:

Պարգևատրուած բարձրատիճան ոստիկանը անցեալ տարի աչքի ինկած էր պատգամաւոր Զարուհի Փոստանճեանին հայհոյելով եւ ՊՊՄ գունդի տարածքը գրաւած «Սասնայ Մուր» գիւղում խոմբէին աստարողներուն՝ Սարի թաղի ցոյցը ուժով ցրելու հրաման տալով: Պատգամաւոր Զարուհի Փոստանճեանի կարծիքով, կեներալ-լեյտենանտ Երանոսեանը մետալ ստանալու համար ոչ մարդկային, ոչ ալ մասնագիտական արժանիքներ չունի:

«Դժուար է բնութագրել պարկեշտ բառերով: Եթէ տղամարդ լինէի, պարգևատրողին պէտք է հայհոյէի հրապարակաւ: Պարգևատրողն աչն անձն է, ով փորձում է մեր հայրենիքի նկատմամբ սէրը փակի տակ դնել, իսկ պարգևատրուողը պարզապէս գործիք է», - ըսաւ պատգամաւորը:

Հայաստանի Հելսինկեան կոմիտէի նախագահ Իրաւապաշտպան Աւետիք Իշխանեանի համոզմամբ, եթէ հանրային կարծիքը աւելի

Jane's Intelligence Կեդրոնի Վերլուծարան

Հնարաւոր է՝ ԼՂ Հարցի Լուծումը Պարտադրուի Արագ Եւ Առաւել Արիւնալի Յարձակմամբ.

2016 թուականը ճգնաժամային տարի էր Հայաստանի համար, թէեւ ներքին ու արտաքին ճարտարապետների շարքն անակնկալ չէր: Իսկ 2017-ին Հայաստանի անկախ պետական ֆունկցիաներն էլ աւելի կը թուլանան, եւ կը մեծանայ Ռուսաստանի ազդեցութիւնը երկրում, ինչը նշանակում է, որ Հայաստանը աւելի խոցելի է դառնալու տնտեսական եւ ազգային անվտանգութեան առումով, քանի որ Հայաստանը 2013-ին արդէն կատարել է իր արտաքին քաղաքական ընտրութիւնը՝ միանալով Եւրասիական միութեանը եւ արտաքին ու ռազմաքաղաքական որոշումների կայացման մենաշնորհը գիջելով Մոսկուային: «Առաջին լրատուական»-ի հետ գրոցում աշակերտի տեսակէտ յայտնեց Լոնտոնի Jane's Intelligence պաշտպանութեան եւ անվտանգութեան հարցերով վերլուծական կեդրոնի ԱՊՀ-ի եւ Ռուսաստանի հարցերով առաջատար վերլուծարան Լիլիթ Գէորգեանը՝ ամփոփելով 2016-ին Հայաստանում եւ երկրի շուրջը տեղի ունեցած կարեւոր իրադարձութիւնները:



Ուսումնական մի համակարգ, որը շատ արդիւնաւէտ է իշխանութեան պահպանման առումով: Բայց սա արւում է տնտեսութեան, երկրի անվտանգութեան եւ անկախութեան հաշուին: Ըստ էութեան, Հայաստանում միակուսակցական համակարգ է գործում, որի մասն են նաեւ գրեթէ լիովին կառավարելի ընդդիմադիրները, ինչպէս ԱՊՀ երկրների մեծ մասում: Այն տարիների ընթացքում է ստեղծուել եւ արդէն տալիս է իր վատ հետեւանքները, ինչպէս 2016-ը ցոյց տուեց:

Պէտք է նշել, որ սա շատ արդիւնաւէտ, լաւ ձեւաւորուած համակարգ է իշխանութեան պահպանման առումով: Այն յենում է լայնածաւալ նեպոտիզմի, բնակչութեան թուր համեմատ մեծ ուստիականական ուժի, տնտեսական գործունէութեան մոնոպոլիզացիայի եւ ակտիւ մեղրա պրոպագանդայի վրայ: Չնայած լրջագոյն տնտեսական եւ անվտանգութեան ճարտարապետներին՝ ՀՀ իշխանական բուրգը լիովին հսկում է քաղաքական դաշտը, ուստի վերնախաւի համար այս համակարգը փոխելու հիմք չկայ:

Ինչպէս ԵՏՄ այլ երկրներում, ՀՀ իշխանութիւնները եւս անցկացնում են կոսմոսիկ փոփոխութիւններ, ինչը հասարակական դժգոհութիւնների կառավարման ձեւ է: Լուրջ համակարգային փոփոխութիւններ, այսինքն՝ արդար ընտրութիւններ, խորքային պայքար կաշառակերութեան դէմ եւ անկախ իրաւական համակարգ, չեն լինելու: Բացի, այսպէս կոչուած, «հմայքային արշաւներից», ինչպիսիք են, օրինակ, նոր կառավարութեան ստեղծումը, նոր ոճով հանրութեան հետ խօսելը, կաշառակերութեան համար մի խումբ պաշտօնեաների ձեռքաւարումը եւ բարեփոխումների խոստումները, ՀՀ իշխանութիւնները, ամենայն հաւանականութեամբ, էլ աւելի կը խստացնեն հսկողութիւնը իրական ընդդիմադիր մամուլի եւ անհատների վրայ: Պատճառը ահապահող ազդեցութեան մակարդակն է: Ըստ Համաշխարհային բանկի տուեալների եւ չափանիշների՝ ՀՀ բնակչութեան 76 տոկոսը աղքատութեան գծից ցածր է 2015-ի տուեալներով: Սա լրջագոյն վտանգ է համակարգի համար: Շարունակուող արտագաղթը որոշ չափով այս խնդիրը կը թեթեւացնի: Բայց ներկայիս իշխանական բուրգը կը կարունակի յենուել իր աւանդական լծակների վրայ՝ լուրջ ընդվզումները վերացնելու համար:

մով ՀՀ իշխանութիւնները եւ քաղաքացիների մեծամասնութիւնը արդէն կատարել են իրենց ընտրութիւնը՝ 2013-ին միանալով Ռուսաստանի ազդեցութեան գոտուն՝ Եւրասիական տնտեսական միութեանը (ԵՏՄ): Ինչպէս եւ սպասուում էր, ՀՀ-ն աստիճանաբար գիջում է իր արտաքին եւ ռազմական քաղաքական որոշումների կայացման մենաշնորհը Մոսկուային: Ռուսաստանի հետ սերտ ինտեգրացիան օգտակար է ՀՀ վերնախավի համար: Այն նուազեցնում է լուրջ հասարակական ապստամբութիւնների ռիսկը՝ հաշուի առնելով, որ Մոսկուան բացառապէս հակակրօնք ունի դեմոկրատական համակարգային փոփոխութիւնների նկատմամբ, յատկապէս ԵՏՄ երկրներում: 2017-ին ՀՀ անկախ պետական ֆունկցիաներն էլ աւելի կը թուլանան, Մոսկուայի ազդեցութիւնը կը մեծանայ, ինչը նշանակում է, որ տնտեսական, ազգային անվտանգութեան առումով ՀՀ-ն աւելի խոցելի է դառնալու:

- Ապրիլեան իրադարձութիւնները եւ յաջորդած բանակցային փուլերից յետոյ Հայաստանը կամ պաշտօնական Երեւանը, Ձեր տպաւորությամբ, աւելի շահեկա՞ն, թե՞ աւելի թոյլ դիրքերում է: Ռազմավարական առումով վերանայում տեսնո՞ւմ էք մեր դիւանագիտութեան կողմից: Նկատի ունե՞մ Ապրիլից յետոյ, երբ միջնորդները ակտիւացրին դիւանագիտական ջանքերը, յատկապէս ռուսական դիւանագիտութիւնը, եւ սկսուեց ակնյայտ ճնշում գործադրուել հայկական կողմի վրայ՝ տարածքային զիջումներ կատարելու համար, պաշտօնական Երեւանը զգալիօրէն կոշտացրեց իր դիրքորոշումը, առաջ քաշեց երեք նախապայման, որոնց կատարումը միայն կ'իմաստաւորի յետագայ բանակցութիւնները, անգամ զգուշաւորութեամբ ակնարկեց Արցախը ճանաչելու հնարաւորութեան մասին: Աւելի ուշ ԱԳ փոխնախարար Շաւարշ Քոչարեանը յայտարարեց, որ Մարդիկեան սկզբունքները եւ նախկինում կիրառուած բանակցային չափանիշները պիտի վերանայուեն, բայց կարծես թե բանակցութիւնները կրկին վերադառնում են նախկին տրամաբանութեանը, եւ Սերժ Սարգսեանն անձամբ կ'իյնուի հետ հարցազրոյցում յայտարարեց, որ պատրաստ է Կազմի տարբերակով հիմնախնդրի լուծմանը: Այս իմաստով կոնցեպտուալ մօտեցում տեսնո՞ւմ էք մեր կողմից:

- Ղարաբաղեան հարցը տարիներ շարունակ օգտագործուած է ՀՀ իշխանութիւնների կողմից ներքա-

ղաքական տարածաշրջանները լուսնայնաւ համար՝ խաղարկելով ազգայնական քարտը, ինչպէս նաեւ շահարկելով թուրք-ատրպէյճանական ազդեցութիւնը: Հետեւաբար ներքին լսարանի համար ՀՀ իշխանութիւնները առաւել ազգայնական կեցուածք ունեն: Այս կեցուածքը դժուար կը լինէր շահագործել, եթէ հանրութեանը յայտնի դառնար, թէ սկզբունքօրէն ինչ զիջումների է համաձայնուել հայկական կողմը տարիներ առաջ: Իսկ արտաքին յարաբերութիւններում ԼՂ հարցը օգտագործուել է, յատկապէս ԱՄՆ-ի եւ Ֆրանսայի դէպքում, լեզուի մոլորակը ձեռք բերելու համար: Բանակցուող փաստաթղթի փոփոխութիւններից ակնյայտ է, որ հայկական կողմը աստիճանաբար թուլացրել է իր դիրքերը, բայց փոխարէնը ոչ արդար ընտրութիւններում յաղթած նախագահներն ընդունուել են իբրեւ լեզուի մոլորակը դեկլարաներ: Այս պահին եւս ԼՂ հարցն օգտագործուած է Մոսկուայի բարեացակամ վերաբերմունքը ներկայիս իշխանութիւնների նկատմամբ ապահովելու համար: Կարծում եմ՝ սա է հայկական կողմի հակասական յայտարարութիւնների պատճառը, քանի որ դրանք ուղղուած են տարբեր լսարանների:

Հակասական յայտարարութիւնները պայմանաւորուած են մէկ այլ հանգամանքով: ՀՀ իշխանութիւնները գիտակցում են, որ ԼՂ լուծման այն փաթեթը, որին իրենք ըստ էութեան համաձայնուել են եւ հանրային քննարկման մինչեւ վերջերս չէին դրել, կարող է լուրջ հասարակական ընդվզման պատճառ դառնալ: Միւս կողմից՝ ներկայիս կոռուպցիոն փակ համակարգի գոյատեւման եւ իշխանութիւնը ձեռքում պահելու համար ներկայիս քաղաքական էլիտան Մոսկուայի հետ սերտ յարաբերութիւններ ունենալու կարիք ունի: Սրա նախապայմաններից մէկը նաեւ ԼՂ խնդիրը ռուսական միջնորդութեամբ լուծելն է:

Կարծում եմ՝ ապրիլեան պատերազմից յետոյ ՀՀ առաւել կոշտ յայտարարութիւնները ներքին լսարանի համար էին՝ որոշ չափով թուլացնելու հասարակական դժգոհութիւնը, ինչպէս նաեւ ազդակ էին Մոսկուային առ այն, որ ՀՀ հասարակութիւնը դեռ անտեղեակ է կարգաւորման մանրամասներին, եւ այդ փաթեթը «վաճառելը» հանրութեանը հետապրիլեան շրջանում դժուար կը լինէր:

- Ինչպէ՞ս էք պատկերացնում բանակցային յետագայ գործընթացը յաջորդ տարուայ ընթացքում հաշուի առնելով ներկայիս փակուղային վիճակը, հնարաւոր ռազմական սրացումները շփման գծում: Ո՞րը պիտի լինի հայկական դիւանագիտութեան նպատակը յառաջիկայ տարուայ ընթացքում:

- ԼՂ հարցում կոնցեպտուալ նոր մօտեցում ՀՀ-ն չի կարող ունենալ, քանի որ սա կը նշանակի առճակատուել Մոսկուայի հետ: Նման քայլ անելու համար պէտք է ունենալ բազմակողմուող եւ նախաձեռնողական արտաքին եւ ռազմական դիւանագիտութիւն, ինչպէս նաեւ նոր ռազմական տակտիկա: Նման առճակատուած կարող է ստիպել Ռուսաստանին վերանայել իր

Քաղաքական Դաշտի 2017 Թուի Նախընտրական Շրջանի Սերմնացանները



ՍՈՒՐԵՆ ԽՈՒՂԱՆԵԱՆ

Հայաստանը 2017 թիվը թե-
լակոխում է նոր սահմանադրու-
թեամբ, նոր ընտրական օրենսգր-
քով բաց հին աւելի առարկայաց-
ուած մարտահրաւերներով, նրանք
են՝ արտաքին մարտահրաւերը, հիմ-
քում ունենալով դարաբաղեան հար-
ցի քաղաքական կարգաւորումը:

Ներքին մարտահրաւերները
հիմքում ունենալով կոռուստայաց-
ուած համակարգի շրջադարձային
փոփոխութիւնը:

Նախընտրական շրջանի ֆո-
նին մեծ տրամաչափի քաղաքական
գործիչների յայտնուելը, ինչպի-
սիք են Հայաստանի առաջին նա-
խագահ Լ. Տէր Պետրոսեանը: Հա-
սարակութեան մէջ բարեգործ-քա-
ղաքական գործիչ ճանաչուած Գա-
գիկ Ծառուկեանի ոչ համարձակ
բաց պահանջուած մոտքը (վե-
րադարձը) քաղաքականութիւն,
ինքնին վկայութիւնն են այն բանի,
որ Հայաստանի առջեւ ծառայել են
լուրջ եւ ներկայիս իշխանութեան
համար անկանխատեսելի մարտահ-
րաւերներ:

Ըստ կանխատեսումների նա-
խընտրական շրջանի քարոզարշա-
ւը՝ յազեցուած է լինելու թէժ եւ
հակասական տրամադրութիւննե-
րով:

Զգացմունքային եւ ամբոխա-
վարական կարգախօսներից աւելի
իրատեսական գաղափարախօսու-
թիւնների անցման ականատեսն
ենք լինելու: Լ. Տէր Պետրոսեանի
կողմից ուղղորդուած այն հայեցա-
կարգային բանաձեւումը՝ թէ՛ եթէ
զիջես առաջինը՝ կը պահպանես
երկրորդը, եթէ՛ չզիջես ոչ մէկը, կը
կորցնես բոլորը: Այս թէզը հասա-
րակական կարծիքի մշակմանը նոր

լիցք է հաղորդելու: Այն որ «ոչ մի
թիզ հող» կարգախօսը ըստ հու-
թեան նոյնն է ինչ «ծովից ծով
Հայաստան» կարգախօսն է եղել,
միանշանակ է, որի կենսունակու-
թիւնը ժամանակի փորձութեանը
չդիմացաւ: Ներքին Քաղաքական
կոմբինացիաների վարպետ Ս.
Սարգսեանը չափազանց բարդ իրա-
վիճակի առջեւ է կանգնած: Մար-
տահրաւերների ծանրութիւնը նրան
ստիպում են շատ աւելի գրագէտ
լուծումներ որոնել, քան իր եւ իր
սեփական թիմի գրագիտութեան
աստիճանն է:

Ապրիլեան քառօրեայ պատե-
Քրիս Պոտճալեանի «ուխտագնացութիւնը»՝ եթէ իր «հպարտութիւն»-ն է, բայց նաեւ այդ իւրաքանչիւր հայունն է: Հայաստան,



Ղարաբաղ եւ սփիւռք:

Հայկական գաղութները եւ հաւաքականութիւնները կրնան տարբերիլ մէկը միւսէն, ըստ իրենց թիւին եւ մարդութիւն: Ու տակաւին՝ ընկերային-քաղաքական ու տնտեսական իրավիճակէն կախեալ: Եւ տակաւին՝ մայրենիին ու լեզուապահպանման տարբեր մակարդակներով: Այս բոլորը հայուն մեծ պատկերին տարբեր մասնիկներն են: Բայց այս բոլորին մէջէն՝ հայը ունի մէկ «ուխտագնացութիւն», թերեւս տարբեր ուղիներով եւ մարտահրաւէրներով, բայց հասնելու համար նոյն... «հպարտութեան»՝ հայուն «հպարտութեան»:

Հայուն «հպարտութիւնը», որ քով-քովի բերելով կը կազմէ մէկ, մեծ եւ գորաւոր հայը:

Հայը պիտի շարունակէ իր «ուխտագնացութիւնը»՝ չկորսնցնելու համար իր «հպարտութիւնը»...:



ԹԵՆՈՐ ՄԵ Կ՝ՈՒԼՈՒԻ

Lend Me a Tenor

A COMEDY IN 2 ACTS

Հեղինակ՝ Written by
ՔԷՆ ԼՈՒՏՎԻԿ KEN LUDWIG

Քինադրիչ՝ Directed by
ԳՐԻԳՈՐ ՍԱԹԱՄԵԱՆ KRİKOR SATAMIAN

ՅՈՒՆԻՄԱՐ / JANUARY
14-15 / 21-22 / 28-29, 2017

Գ.Բ.Ս.Մ. Վաչէ եւ Թամար Մանուկեան Կեդրոն
A.G.B.U. Vatche & Tamar Manoukian Center
2495 E. Mountain Street, Pasadena, CA 91104

Շաբաթ օրերը ժամը 8:00-ին, միայն Յունուար 21 ժամը 6:00-ին
Կիրակի օրերը ժամը 6:00-ին
Saturday performances at 8:00 pm, except on January 21 at 6:00 pm
Sunday performances at 6:00 pm

Տոմսերը կարելի է ապահովել / Tickets available at:
Գ.Բ.Ս.Մ. Ի ԳՐԱՍԵՆՏԱԿ / A.G.B.U. OFFICE (626) 794-7942
ՊԵՐՃ ԳՐԱՏՈՒՆ / BERJ BOOKSTORE (818) 244-3830
ԱՊՐԻԼ ԳՐԱՏՈՒՆ / ABRIL BOOKSTORE (818) 243-4112
ITSMYSEAT.COM/TENOR
Մուտքի անվոյն / Donation \$25

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

«ՓՈՐՁԱՌՈՒԹԻՒՆՆԵՐ»

Յեղիմակ՝ Վեր. Դոկտ. Վահան Թուֆիկեան

ՍԻՂՐԱՆ ԾԻՋՍԵՃԵԱՆ

Տիթրոյթի Հայ Ժառանգութեան Յանձնախումբը 2017-ի Նոր Տարուան առաջին օրերուն լոյս ընծայեց խոհուն մտաւորական, բազմապատակ վեթերան հովիւ եւ համալսարանի դասախօս Վեր. Դոկտ. Վահան Թուֆիկեանի 39-րդ երկրագունեան հատորը «Փորձառութիւններ» վերտառութեամբ:

Սոյն գիրքը կը բաղկանայ 31 անգլերէն եւ 15 հայերէն յօդուածներէ որոնք, ըստ հեղինակին, խոհեր, մտածումներ եւ վերլուծումներ են՝ անցած իր անհատական եւ հովուական փորձառութիւններու պրիսմակէն:

Հեղինակը այս հատորը ձօնած է Մեծագոյն Տիթրոյթի Հայ Աւետարանական Եկեղեցիին, որուն ծառայած է որպէս հոգեւոր հովիւ աւելի քան 30 տարիներ, (1975-2005) եւ այդ թուականէն ի վեր կը շարունակէ ծառայել իբրեւ պատուակալ հովիւ:

Գիրքը գեղեցիկ ծաղկեփունջ մըն է բազմատեսակ նիւթերու որոնք աղբս ունին բնութեան, մարդկային կեանքի ու կենցաղի, ինչպէս նաեւ եկեղեցական, ազգային, դաստիարակչական եւ ընկերաբարոյական հարցերու հետ: Ինչպէս իր նախորդ գիրքերուն մէջ, այս հատորի յօդուածներուն մէջ ալ, հեղինակը հմտօրէն կը պատասխանէ «Ի՞նչ», «Ինչու՞», «Ի՞նչպէս» կամ «Ե՞րբ» հարցումներուն:


Յաճախ մարդոց անձնական փորձառութիւնները կը դառնան իրենց համար լաւագոյն ուսուցիչներ՝ սորվեցնելու, ուղղելու եւ առաջնորդելու: Վերապատուելին իր գիրքին մէջ՝ հիմնուելով իր փորձառութիւններուն վրայ գործնական առաջարկներ կ'ընէ եւ ցուցմունքներ կու տայ իր ընթերցողներուն անսեթեւեթ եւ ինքնատիպ ոճով մը: Հատորին մէջ գործածուած անգլերէն եւ հայերէն լեզուները հաւասարապէս դիւրահաղորդ եւ առինքնող են:

Վերապատուելին քրիստոնէական սկզբունքներու հանդէպ հաւատքն ու հայ մշակոյթին հանդէպ խանդավառ սէրը ակնյայտ են իր գրութիւններուն մէջ: Ընթերցողները, ինչպէս զինք անձամբ ճանչցողները, շատ հեշտութեամբ կրնան իր մէջ տեսնել տիպար հայ կղերը ինչպէս նաեւ լիիրաւ Հայը:

Հեղինակին անխախտ համոզումն է թէ կարելի չէ անջատել հայ քրիստոնեան իր հայ մշակոյթէն: Հայ քրիստոնէական կրօնը եւ հայ մշակոյթը գուրահեռ ընթացքով, հայապահպանման վսեմ գործին անյետաձգելի եւ կարեւոր կուսաններ են: Իր խոր համոզումն է նաեւ, որ հայապահպանում եւ Հայ Դատ անքակտելիօրէն կապուած են իրարու եւ կ'ամբողջանան իրարմով:

Կը շնորհակտրեմ 39 գիրքերու վաստակաշատ հեղինակ՝ Վեր. Դոկտ. Վահան Թուֆիկեանը եւ իր յարածուն ճիգերը, յարատեւութիւնն ու գրելու տաղանդը, որոնք իր այլ աստուածատուր շնորհներուն հետ, ան կը նուիրաբերէ Աստուծոյ փառքին եւ իր ազգին ու մարդկութեան բարօրութեան համար:

Աստուծոյ այս ծառային գրական վաստակին արգասիք եղող այս 160 էջերէ բաղկացած գեղատիպ եւ շինիչ «Փորձառութիւններ» վերտառութեամբ հատորը անվարան կը յանձնարարենք ընթերցասէր



հասարակութեան: Գիրքի վաճառման եւ առաքման գինն է 28.50 տոլար: Ստանալու համար կարելի է դիմել հետեւեալ հասցէին.- Armenian Heritage Committee 3922 Yorba Linda Blvd, Royal Oak, Michigan 48073-6455 (USA)

ՏԻԱՐՊԵՔԻՐԻ ԿԻՆՈՓԱՌԱՏՕՆԻՆ ՐԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԱՆԴՐԱԴԱՐՁՈՂ ՖԻԼՄԵՐ ՑՈՒՑԱԴՐՈՒԱԾ ԵՆ

Թուրքիոյ, Հիւսիսային Կիպրոսի եւ Իտալիոյ շարք մը քաղաքներու մէջ տեղի ունեցող «Ամեռի կինոփառատօն»-ի (Ամեռ՝ պատմ. Տիգրանակերտ, Տիարպեքիր-խմ.) ծիրին մէջ նաեւ հայկական նիւթով ֆիլմեր ցուցադրուած են: Ըստ թրքական «Evrensel.net» լրատուկայքին, այդ ֆիլմերու շարքին են բեմադրիչ Այշէ Փոլաթի հեղինակած վաւերագրական ֆիլմը, որ նկարահանուած է Վանի մէջ. կը տեղեկացնէ Ermenihaber-ը:

«Քիւրտերու, թուրքերու եւ հայերու մշակութային խորհրդանիշը հանդիսացող կատուններով յայտնի Վանը, որ այսօր քրտական նահանգ է, մինչեւ 1915 թուականը, այսինքն՝ տեղահանութենէն ու կոտորածներէն առաջ, հայերու պատմական հայրենիքն էր: Իսկ այսօր այստեղ մնացած են միայն կիսաւեր եկեղեցիներ եւ շատ փոքրաթիւ հայ վանեցիներ, որոնց մեծ մասը նոյնիսկ կը խուսափի իր հայ ըլլալուն մասին խոստովանելէն:

«Օտարները» ֆիլմին նիւթը հայերու ողբերգութեան վերաբերեալ բանաւոր կերպով իրարու փոխանցող պատմութիւններն են: Ֆիլմը կը տանի պատմական ողբերգութեան հետքերով եւ ցոյց կու տայ, որ անցեալը երբեք չի մահանար», - կը գրէ աղբիւրը:

Իսկ բեմադրիչ էքրեմ Հայտոյի «Cennetim» («Իմ դրախտ») ֆիլմը նկարահանուած է Արեւմտեան Քիւրտիստանի (Ռոժաւա) եւ Հայաստանի մէջ: Ֆիլմը կը պատմէ Ռոժաւայի Սերեքանիէ (Ռասուլայն) քաղաքի բազմազգ բնակչութեան եւ հայ երիտասարդ Արայի մասին: Ֆիլմին մէջ շօշափուող գլխաւոր նիւթը ընկերութիւնը, հայրենիքի որոնումներն ու ազգամիջեան հակամարտութիւններն են:

Մանկութեան տարիներուն Արան նոյն դասարանին մէջ սորված է քիւրտ, արաբ, չեչեն եւ եգիպտի տղաներու հետ: Մեծնալէ ետք անոնցմէ ամէն մէկը ճանապարհով մը դացած է:

Ararat-Eskijian Museum National Association for Armenian Studies and Research (NAASR) present a staged reading of the play "RED DOG HOWLS" From Alexander Dinularis, Oscar-winning co-writer of "Birdman" This play delves into the dark history of the Armenian Genocide. It is a stirring and powerful tale about the lives of subsequent generations who are deeply affected by the experiences of their ancestors. When his father dies, Michael Kiriakos is left with a note instructing him to bury his father with the contents of a mysterious box, without opening anything inside. Michael discovers the box contains old, unopened letters - all from the same woman. Unable to resist, he tracks down the woman and uncovers a harrowing past he never knew existed. Immediately following the performance will be a discussion with the actors, moderated by Dawn Anahid MacKeen, author of "The Hundred-Year Walk: An Armenian Odyssey." Sunday, January 22, 2017, 4PM Ararat-Eskijian Museum / Sheen Chapel 15105 Mission Hills Road Mission Hills, CA 91345 Admission \$15 Please note that the play is not appropriate for children under 18. For more information, contact Ararat-Eskijian Museum at (747) 500-7585

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 2016-ԻՆ ՅԱՅՏՆԱԲԵՐՈՒՄԸ ԲԱՅԱՌԻԿ ԺԱՅՈՒՊԱՏԿԵՐԻ ՏԵՂԸ ԳԱՂՏՆԻ ԿԸ ՊԱՅԻՈՒՄ



2016 թվականը նշանակալի տարի էր հնաբանների, հնագիտների, քարանձաղագետների համար: Անցած տարի բացառապատկերներ էլ բարձրաձայնեցին մի շարք պեղումների, յայտնագործությունների եւ ուսումնասիրությունների արդյունքներ, որոնք պատմական եւ հնագիտական առումով շատ կարեւոր էին ոչ միայն հայերիս, այլ ողջ տարածաշրջանի պատմության ուսումնասիրության համար:

2016 թվականին հնագիտները, քարանձաղագետները բարձրաձայնեցին նոր հետազոտությունների, ուսումնասիրությունների մասին՝ վերահաստատելով, որ Հայաստանը այն եզակի երկրներից է, որտեղ հնագոյն աշխարհի պատմությունը խորը արմատներ ունի, եւ որ աշխարհագրական փոքր չափեր ունեցող այսօրուայ Հայաստանը բաց ու ընդարձակ հնագիտական աղբյուր է ուսումնասիրողների համար: Սակայն պետական հոգածություն բացակայության պատճառով ոչ միայն նոր բացայայտումներն են հողակոյտ դառնում, այլ նաեւ դեռ կանգուն մնացած պատմամշակութային արժեքները:

Պատմական գիտությունների դոկտոր պրոֆեսոր, ԵՊՀ մշակութաբանության ամպիոնի վարիչ, ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի Արցախի հնագիտական արշաւախմբի ղեկավար Համլետ Պետրոսեանը պատմամշակութային ժառանգությունների պահպանության թերապիայի տեսնում է եւ պետություն, եւ մասնա-

ւոր հատուածի կողմից: «Սեփականությունն ունան հոգատարությունն էն ցուցաբերում: ՀՀ միակ տարածքն է, որտեղ հայերը պատմական հնարաւորություն ունեն ձեւաւորելու քաղաքական եւ քաղաքացիական հանրային, սակայն այդ գործընթացը տեղի չի ունենում», - ասում է հնագետը եւ օրինակ բերում Իսրայելը: Պետություն, որը պայքարում է սեփական հողակտորի համար, որպէս սրբություն է վերաբերում մշակութային արժեքներին, իսկ մեր պարագայում ոչնչացում է»:

Հոգածության պակասի մասին են բարձրաձայնում նաեւ քարանձաղագետները՝ խօսելով աշխարհում բացառիկ համարուող յայտնագործության մանրամասների մասին: Քարանձաղագիտական կենտրոնի նախագահ Սամուէլ Շահինեանը եւ Հայ-Լուսակա համատեղ քարանձաղագիտական արշաւախմբի Չղեկավար, քարանձաղագետ Սմբատ Դաւթեանը «Ռադիոլուրի» հետ զրոյցում խօսելով

կարստային քարանձաղում յայտնաբերուած ժայռանկարի մասին, փոխանցեց իտալացիների բնորոշումը՝ ֆանտաստիկա: «Առաջին անգամ հայաստանեան կարստային քարանձաղներից մէկում յայտնաբերուեց ժայռանկար, որն իր ոճով նման է սպանական Ալտամիրայի քարանձաղում առկայ ժայռանկարներին: Առայժմ ուսումնասիրութիւն չի արուել, բայց նախնական թուազրութեամբ պալէոլիթի շրջանի է՝ 10-12 հազար տարի», - նշում է Դաւթեանը: Որտեղ է գտածոն, առայժմ գաղտնի է պահուած՝ ժայռապատկերը փրկելու մտաւարութիւնից ելնելով, քանի որ այսօր շատ չակերտաւոր «պահպանուող» քարանձաղներ անգամ ոչնչացման եզրին են: Խօսքը՝ 20-22 քարանձաղների մասին է, իսկ առկայ շուրջ 10 հազար քարանձաղից 100ը կարող են օգտագործուել գրասարքային նպատակներով: Որպէս օրինակ նշում է Մագիլի քարանձաղը, որում առկայ պրոնոգի դարի շերտը վայրագորէն ոչնչացում է:

Քարանձաղագետների միութեան նախագահ Սամուէլ Շահինեանն իր հերթին «Ռադիոլուրին» փոխանցել է, որ քարանձաղների պահպանութեան հարցում պէտք է յստակ ռազմավարութիւն մշակուի, որովհետեւ մէկը պէտք է պատասխանատու լինի՝ «Անանուն տէրեր չեն լինում» ընդգծել է: Այժմ քարանձաղներից անցում կատարենք միւս կարեւոր ուսումնասիրություններին:

ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի տնօրէն Պաւել Աւետիսեանն էլ իրենց կատարած պեղումների արդիւնքների վերաբերելով նշում է՝ պատմությունը գրում է երկու աղբյուրների հիման վրայ՝ գրաւոր եւ հնագիտական պեղումների, եթէ նախկինում գրաւոր տուեալներն էին գերիշխող, այսօր արդէն 99 տոկոսով հնագիտական եւ ամենատպաւորիչ արդիւնք Աւետիսեանը

նշում է Գեղարտի պեղումների ընթացքում, որտեղ աշխատել է հայ-ամերիկեան արշաւախումբը, յայտնաբերուած Քրիստոսից առաջ երրորդ հազարամեակի առաջին կէսի կառուցները, որոնք գերեզմանոցի մաս են կազմել եւ ծխական նշանակութիւն ունեցել: 2016 թվականին մեծ ծաւալի աշխատանքներ են արուել նաեւ «Սոլակ-1» հնավայրում, ուսումնասիրուել եւ ուսումնասիրուում է վանի թագաւորութեան շրջանի՝ արքայական կառուցներին բնորոշ յատկազոտով ամրոց-դղբակը, որը սակայն ոչ արքայական արհեստանոցներում պատրաստուած նիւթերով հնավայր է: Պեղումների փուլում է վիշապ քարակոթողների ուսումնասիրությունների ծրագիրը, որը բացառիկ է նրանով, որ 3000 մեթրի վրայ են աշխատանքներ կատարուում, քանի որ որպէս կանոն հնագիտական յուշարձանները կողկասում 2400 մետրից չեն անցնում:

Քարակոթող է յայտնաբերուել նաեւ Գառնի տաճարի տարածքում, որտեղ վանի թագաւորները սեպագիր արձանագրութիւն են թողել: Դրանից հետեւում է, որ դրանք վաղ են, քան վանի թագաւորութեան շրջանը: Տեղափոխվենք Աղձք եւ կարմիր բլուր: Թեյչեբայինի դամբարանադաշտում, կամ ինչպէս ժողովուրդն է ասում՝ կարմիր բլուրում, եւ Աղձքում իրականացուած բացառիկ հետազոտութեան արդիւնքում յայտնաբերուած՝ Թեյչեբայինի պարագայում հայոց փոխարքայի պրոնգի կերտուած ցլազուլի կեռ մականը, իսկ երկրորդի դէպքում՝ հայոց արքաների մասունքները:

Ի դէպ, կարմիր բլուրի պեղումներից գտնուած մականը եւ պեղումները հերքեցին ուրարտացիների անյայտ ծագում ունենալու պնդումները: «Ուրարտացիներ եղել է Արարատեան դաշտի բնիկը», - ասում է Յակոբ Սիմոնեանը: «Նորապէս համոզուած եմ, որ Ուրարտուն դա հայկական կայսրութիւն է, իր բազմաշերտ բնակչութեամբ, որտեղ գերակշռող եղել է հայկական տարրը» - շեշտեց Սիմոնեանը:

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ

1060 North Allen Ave
Pasadena, CA 91104

Գրասենեակները վերանորոգուած եւ յարմար վարձքերով հեռաձայնել՝

(626) 398-0506

MARTIAL ARTS - ORGANIZED by GAIDZ YOUTH ORGANIZATION

SEVAK HAKOBYAN
4th dan
INTERNATIONAL MASTER OF MARTIAL ARTS
WORLD RECOGNIZED MEMBER OF ADAPTIVE SPORTS

- ❖ MARTIAL ARTS
- ❖ SELF-DEFENSE
- ❖ FOR MEN, WOMEN, CHILDREN & PEOPLE WITH DISABILITIES OF ALL AGES
- ❖ FREE for PEOPLE With DISABILITIES - GREAT RATES for FAMILIES & STUDENTS

ADDRESS: 1060 NORTH ALLEN AVENUE, PASADENA, CA 91104
For registration and info text: 626-926-7224 or email: info@gaisz.net




FOLLOW US ON: Instagram @Gaidzyo; Facebook Gaidz Youth Organization; Twitter @GaidzYouth

ԳԼԽԱՑԱԿԵՐՈՒ ԴԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ ԴՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԸ

Գլխացավերը բնական են յատկապես, երբ մարդիկ յոգնած, անհանգիստ կամ ճնշուած զգան։ Սակայն կարգ մը գլխացավեր կրնան մշտական կամ chronic ըլլալ։ Այլ խօսքով՝ այս գլխացավերը կը պատահին յաճախ եւ զանոնք կարելի չէ ամբողջովին բուժել։ Մշտական ցաւերու պարագային, ներկայ տուեալներով լաւագոյն բուժումն է ցաւազերծիչ դեղերու միջոցով ցաւերու մեղմացումը։ Ամէնէն ուժեղ գլխացավերը կը պատահին միկրոէնի պարագային։ Միացեալ Նահանգներու վերջին յայտարարութիւններով, ամերիկացիներու 10 առ հարիւր համեմատութիւնը կը տառապի միկրոէնի գլխացաւերէ։

Նախապէս կատարուած հետազոտութիւններու համաձայն, յատկապէս միկրոէնի պարագային, գլխացաւերու նպաստող հիմնական գործօնն է՝ ճնշուածութիւնը կամ stress-ը։ ճնշուածութեան հետեւանքով, կրնան բարձրանալ արեան ճնշումը եւ արագանալ սրտին գարկերը։ ճնշուածութեան ժամանակ նաեւ կրնան լայննալ երակները, որպէսզի արիւնը դիւրութեամբ շրջագայի մարմնին մէջ։ Ընդհանրապէս, երակներու լայնացումը

կրնայ գլխացաւ պատճառել միկրոէնի տառապող անձերուն մօտ։

Հետաքրքրական է, որ Մոնթէֆիորի գլխացաւերու կեդրոնի եւ Ալպէր Այնըշթայնի անուան Եշիվայի բժշկական համալսարանի գիտնականներու կողմէ կատարուած նոր ուսումնասիրութիւն մը ցոյց կու տայ թէ ճնշուածութեան կողքին, հանգստութիւնը եւս կրնայ յառաջացնել գլխացաւեր։

Ուսումնասիրութեան հեղինակները կը համաձայնին թէ ճնշուածութիւնը մեծ դեր ունի գլխացաւերու յառաջացման մէջ, սակայն անոնք կը շեշտեն թէ գոյութիւն ունի ճնշուածութեան ուժեղ այլ գործօն մը։ Ըստ հետազոտութեան արդիւնքներուն՝ ճնշուածութեան արագ նուազեցումը կամ վերացումը կրնայ անմիջապէս պատճառ դառնալ միկրոէնի ուժեղ գլխացաւերու։

Այս ուսումնասիրութեան շնորհիւ գիտնականներ յայտնաբերեցին թէ ճնշուածութեանէ ետք հանգստութիւնը աւելի ուժեղ դրդապատճառ կրնայ ըլլալ քան ճնշուածութիւնը։ Այս ուսումնասիրութեան մասին անդրադարձած է Neurology ամսաթերթը։

ՓՈՔՐԻԿ ԶԱՐԳԱՆՔԻ ԱՐԺԱՆԻ ԱՆՅԱՏ Է

Հասարակութեան մէջ ինքզինք ազատ զգացող մարդը երբեք չի մտահոգուիր շարժուածքներով եւ այն հարցով, թէ այս կամ այն իրադրութեան մէջ ինչ պէտք է ըսել կամ ընել։ Իսկ անոնք, որոնք չեն կրնար անկաշկանդ ըլլալ, սովորաբար կ'աշխատին իրենց իրականութենէն աւելի լաւ երեւիլ։ Անոնք՝ չկրնալով նոյնքան ազատ զգալ ինչպէս տան մէջ, մարդոց ներկայութեան կը ձգտին բարեկիրթ երեւիլ։ Իսկ փոքրիկները պարզապէս անհրաժեշտութիւն չեն տեսներ ոեւէ մէկուն հետ վարուիլ անսովոր ձեւով։ Անոնք տան մէջ եւ դուրսը այնպիսին են, ինչպէս որ են։ Կիրթ շարժուածքի ուսուցումը պէտք է ստիպելով ըլլայ։

1. Գլխաւորը այն է, որ սէր ներշնչէք դէպի մարդը։ Այն փոքրիկը, որ կեանքի առաջին տարիներուն չէ զգացած ծնողական ջերմութեան վայելքը, ինքն ալ չի կրնար լիարժէք ծնող դառնալ։ Սիրելու ունակ է ան, որուն սիրած են մանկութեան տարիներուն։

2. Անծանօթ մարդոց ներկայութեան խուսափեցէք փոքրիկին վրայ ուշադրութիւնը կեդրոնացնելէ եւ նկատողութիւն ընելէ։

Փոքրերուն բարեկիրթ շարժուածքներ սորվեցնելու եղանակը անոնց համար միշտ օրինակ ծառայելն է։ Զեզ ընդօրինակելով, փոքրիկը առանց դժուարութեան կը սորվի քաղաքավարութեան կանոնները։ Խնդիրը այն է, որ մեզմէ շատերը որեւէ հիւրընկալութեան կամ պաշտօնական հանդիպման ժամանակ կը ցուցաբերեն անթերի վարք, բայց... այն պահուն, որ հողաթափերը կը հագնին, ամէն բարեկիրթութիւն մէկ կողմ կը նետեն... Փոքրերը մեզմէ կը սորվին վարքի եւ լաւ եւ վատ դրսեւորումներ եւ չեն հասկնար, թէ որն է ճիշդ, կամ՝ սխալ։

Բացի անկէ մենք յաճախ անքաղաքավար ենք մեր փոքրիկներուն հետ։ Նկատի ունենալով, որ ամենագլխաւորը միշտ լաւ օրինակ ծառայելն է՝

1. Բարեկիրթ շարժուածքներ սորվեցուցէք տան մէջ, ոչ թէ

փողոցը կամ ուրիշներու տան մէջ։

2. Բարեկիրթութեան դասերը վերածեցէք խաղի եւ անոնց սորվեցուցէք, թէ ինչպէս պէտք է վարուի հիւր գացած ժամանակ, կամ ընկերոջ ծնունդին։

3. Դաստիարակութիւնը փոքրիկին համար լուրջ դաս մի դարձնէք, ձեր ըսելիքը անոր փոխանցեցէք անկկատ, առանց շտապելու եւ գոռոտելու։

4. Երբ հիւր ունիք, փոքրիկը անմիջապէս մի ներկայացնէք, այլ՝ մէկ երկու վայրկեան ետք, մինչեւ փոքրիկը քիչ մը ընտելանայ։

5. Այնպէս ըրէք, որ փոքրիկը ձեր ընկերներուն եւ բարեկամներուն մօտ ինքզինք անկաշկանդ զգայ։ Զինք մի մեկուսացնէք հիւրերէն, թոյլ տուէք որ ձեզի հետ ճաշէ։ Այդ պարագային ան հաճոյքով պիտի սպասէ հիւրերուն։

6. Եթէ ձեր փոքրիկը կը մոռնայ բարեւել կամ շնորհակալութիւն յայտնել, դուք ըսէք անոր փոխարէն, բայց մի՛ յամառիք, որ անպայման ինքը ըսէ։

7. Մի՛ յուսահատիք, եթէ փոքրիկը դրսեւորէ երբեմն բարեկիրթ, երբեմն անբարեկիրթ վարք։

Երբեմն առաջին փոքրիկը կը մեծնայ ինքնամփոփ, այն պատճառով որ ծնողները չափազանց լուրջ կը վերաբերին իրենց ծնողական փորձին. աշխատեցէք կարելի եղածին չափ քիչ ցուցմունքներ տալ, բարկանալ, անհանգստանալ։ Ծնողներու կշտամբանքներն ու պատիժները միմիայն իրենց անգորութեան արտայայտութիւնն են։ Իւրաքանչիւր փոքրիկ յարգանքի արժանի անհատ է։ Շատ ծնողներ, նոյնիսկ ամենաբարի մտադրութիւններ ունեցողները, ի վերջոյ կը ձգտին իրենց երեխան ոչ թէ երջանիկ դարձնել, այլ հիանալի դաստիարակուած։ Սխալ է մտածել, թէ իւրաքանչիւր դաստիարակուած երեխայ երջանիկ է։ Օրինակելի վարքը երեխաները երջանիկ չի դարձնէ։ Ծնողքին գլխաւոր խնդիրն է առաջին հերթին պատշաճ վերաբերման հասարակչութիւնը եւ յետոյ միայն՝ անթերի վարքագիծը։

ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՕՆՆԵՐ՝ ԴՐԱԿԱՆ ԵՒ ԺՆՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

Դրական տեսակէտ եւ մտածելակերպը ամէնէն շատ օգտակար են կեանքի ցաւալի եւ ժխտական դէպքերուն պարագային։

Սակայն նման կացութիւններու մէջ բաւական դժուար է դրական ըլլալ կամ կեդրոնանալ հարցերու դրական կէտերուն վրայ։

Միջիկընի Պետական համալսարանի դասախօսներէն մէկը յայտնաբերած է թէ ուղեղին մէջ գտնուող քիմիական նիւթերը մեծ դեր ունին անձի մը մտածելակերպին մէջ։

Նոր հետազոտութիւն մը, որուն մասին գրուած է Journal of Abnormal Psychology ամսաթերթին մէջ, կը ներկայացնէ առաջին գիտական փաստերը, որոնք ցոյց կու տան թէ իսկապէս գոյութիւն ունին դրական

կամ եւ ժխտական մարդիկ։ Ճէյսոն Մոսէր, որ հետազոտութեան պատասխանատուն է, կ'ըսէ թէ իր հետազոտական խումբը առաջին անգամն ըլլալով յայտնաբերած է ուղեղային գործօն մը, որ կրնայ պատասխանատու ըլլալ մարդոց դրական կամ ժխտական մտածելակերպին։

71 կիներու մասնակցութեամբ կատարուած հետազոտութեան արդիւնքներուն հիման վրայ, Մոսէր կը յատկացնէ թէ չենք կրնանք անձի մը խրատել որ ան դրական ձեւով մտածէ տուեալ հարցի մը վերաբերեալ։ Ան կ'աւելցնէ, որ պէտք է օգնենք որ անձը իր մօտեցումը բոլորովին փոփոխութեան ենթարկէ, եւ այս մէկը կը կարօտի ժամանակի եւ ջանքերու։

ՕՐԱԿԱՆ ԲՈՒՌ ՄԸ ԸՆԿՈՒՋԵՂԵՆԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ Կ'ԻՋԵՑՆԷ ՔԱՂՑԿԵՂԻ ՀԱՄԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ 15 ՏՈԿՈՍՈԿ

Գիտնականները պատմած են, թէ ինչպէս ընկուզեղէնը կը պաշտպանէ լուրջ հիւանդութիւններէ։ Անոնք յայտարարած են, որ ընկուզի կանոնաւոր օգտագործումը կրնայ մարդը փրկել լուրջ հիւանդութիւններէ, ներառեալ քաղցկեղէ։

Մասնագէտները շատ լրջութեամբ կը մօտենան ընկուզի օգտակարութեան։ Անոնք ուսումնասիրած եւ վերլուծած են իրենց գործընկերներու 29 աշխատանք եւ եկած համապատասխան եզրակացութեան։

ԻՆՉԸ Կ'ՕԳՆԷ ԼԱՒ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՆԱԼՈՒՆ

Եթէ Դուք խնդիրներ ունիք յիշողութեան հետ, ուստի անհրաժեշտ է, որ ձեր սննդականոնին մէջ ընդգրկէք հաւկիթը։ Ամերիկացի գիտնականները կը պնդեն, որ հաւկիթի պարբերաբար օգտագործումը կրնայ կանխել յիշողութեան կորուստի գործընթացը։

Գիտնականները հաւկիթի օգ-

ցութեան։ Կը պարզուի, որ օրական ընդամենը 20 կրամ ընկուզը ունակ է նկատելիօրէն իջեցնելու չարորակ ուռուցքներու զարգացման հաւանականութիւնը եւ սիրտ-անոթային հիւանդութիւնները։ Ի դէպ, բոլոր տեսակի ընկուզները օգտակար են։ Հետազոտողներու խօսքով, ընկուզները հարուստ են իւղե թով, բջիջանիւթով, մակնիւծով եւ այլ օգտակար նիւթերով, որոնք բարենպաստ ազդեցութիւն կ'ունենան ընդհանուր մարդու մարմնին վրայ։

ՔԱԼԵՆՈՒ ԺԱՄԱՆԱԿ ԾՆՈՒՆԴ Կ'ԱՌՆԵՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐ

Քալելը ամէնէն հաճելի եւ ամէնէն դիւրին մարզաձեւերէն մէկն է։ Աշխատանքային ճնշուածութեան, մտազբաղութեան եւ յոգնածութեան ձեւերու հետեւին համար մարդիկ յաճախ կը փափաքին քալել՝ թէկուզ քանի մը վայրկեաններ միայն։ Քալելէ ետք թէ՛ մարմինը եւ թէ՛ ուղեղը կը թարմանան եւ կ'աշխուժանան։ Կարգ մը մարդիկ կ'սօրբ վերջուան քունին փոխարէն կը քալեն եւ նոյնքան դարմացած եւ վերանորոգուած կը զգան։

Սանթա Գլարա համալսարանի հետազոտներէն՝ Մարիլի Օբէյցո կ'ըսէ թէ բազմաթիւ մարդիկ յաճախ «կէս կատակով» արտայայտուած են թէ իրենց ամէնէն հետաքրքրական եւ լաւ գաղափարները կը յայտնուին քալած ժամանակ։ Հաւանաբար պատահական չէ որ Պէթհոլմէնը ամէն օր ճաշէն ետք անպայման կը քալէր։ Նոյնպէս նշանաւոր նորավիպագիր՝ Չարլզ Տիգլընը իր օրուան մեծ մասը կ'անցընէր քալելով։ Չարլզ Տարուին եւս օրական անպայման երեք անգամ կը քալէր։

Քալելու եւ մտքի ստեղծագործութեան միջեւ կապը քննելու համար Օբէյցո եւ իր աշխատակիցները շարք մը փորձարկումներ կը կատարեն Սթէյնֆորտ համալսարանին մէջ։ Փորձարկումներէն մէկուն

տագործման դրական անդրադարձը ուղեղին վրայ բացատրած են անով, որ հաւկիթին մէջ գոյութիւն ունին երկու տեսակ հաւաօքսիտներ։

Հետազոտութիւնները նաեւ ցոյց տուած են, որ հաւկիթը դրական անդրադարձ կ'ունենայ մարդուն մտային կարողութիւններուն վրայ։

պարագային, մասնակիցները տուեալ աշխատանք մը կը կատարեն նստած ժամանակ եւ այլ նոյնանման աշխատանք մը՝ քալած ժամանակ։ Այս փորձարկումի աւարտին ի յայտ կու գայ թէ քալած ժամանակ մարդիկ աւելի ստեղծագործութեամբ կը կատարեն տուեալ աշխատանքը։

Այս փորձարկումները ընթացքին, մասնակիցներու ստեղծագործութիւնը կը քննուի նախքան քալելը եւ քալելէ ետք՝ օգտագործելով Creative Thinking-ի յատուկ հարցարանը։ Հետազոտները դիտել կու տան թէ քալելէ ետք մարդիկ աւելի բարձր նիշ արձանագրեցին Creative Thinking-ի քննութեան։

Օբէյցո եւ իր գործընկերները կը յայտնեն թէ անոնք ներկայիս անկարող են բացատրել թէ քալելը ի՞նչ ձեւով կը նպաստէ ստեղծագործութեան։ Անոնք կ'ենթադրեն թէ քալելու կողքին, այլ ֆիզիքական դիւրին աշխատանքներ եւս կրնան ծնունդ տալ ստեղծագործ միտքերու։ Գիտնականները կոչ կ'ուղղեն որ հոգեբանութեան ծիրին մէջ գործող հետազոտներ յաւելեալ ուսումնասիրութիւններ կատարեն մարմնի աշխատանքներու եւ ստեղծագործութեան կապին գծով։

ՆԱՅԻՐԻ ՇՈՐՃԵԱՆ

ՖԻՖԱ-Ն ԱԻՏԼԱՅՐԵԼ Է ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋՆՈՒԹԵԱՆԸ ՄԱՍՆԱԿՑՈՂ ԹԻՄԵՐԻ ՔԱՆԱԿԸ

ՖԻՖԱ-ն որոշել է աւելացնել աշխարհի առաջնութեան եզրափակիչ փուլի մասնակից թիմերի թիւը՝ հասցնելով 48-ի: Այս մասին որոշումն ընդունուել է այսօր Յիւրիխում:

Նոր համակարգը կը գործի 2026 թուականից: Առաջնութեանը ընդհանուր առմամբ մասնակցելու է 16 խումբ, որոնցից իւրաքանչիւրում երեքական թիմ կ'ընդգրկուի: Ներկայումս մրցաշարին մասնակցում են 32 երկրների հաւաքականներ, որոնցից ձեւաւորուել է ութ խումբ, որոնցում ընդգրկուած են չորսական թիմեր:

Մրցումների ընթացքում անցկացուող խաղերի քանակը 64-ից կը հասցուի մինչեւ 80-ի: Ընդ որում իւրաքանչիւր հաւաքական խաղալու է առաւելագոյնը 7 խաղ՝ նախկինի պէս:

2009-ԻՑ ՅԵՏՈՅ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ «ՄԱՆՉԵՍԹԵՐ ԵՌՆԱՅԹԸՏԸ» ՏԱՐԱԲ 8 ԱՆԸՆԴՄԷՋ ՅԱՂԹԱՆԱԿ

«Մանչեսթեր Եունայթըտը», ֆուտպոլի Անգլիայի գաւաթի խաղարկութեան 1/32 եզրափակիչում 4:0 հաշուով յաղթելով Ախոյեանութեան ներկայացուցիչ «Ռեդինգին», 8-րդ անընդմէջ յաղթանակն է տարել բոլոր մրցաշարերում:

Մանչեսթերցիները նման յաղթական շարք նախորդ անգամ ունեցել էին 2009 թուականին, երբ թիմը գլխաւորում էր Ալեքս Ֆերգիսոնը:

Դեկտեմբերի 4-ին «Մանչեսթեր Եունայթըտը» 1:1 հաշուով էր աւարտել «Էվերտոնի» դէմ Պրեմիեր լիգայի խաղը, ինչից յետոյ միաւորներ չի կորցրել:

Յիշեցնենք, որ «Ռեդինգի» դէմ խաղում Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանը հայտաւորուել էր «Մանչեսթեր Եունայթըտի» փոխարինողների թւում, բայց խաղադաշտ դուրս չէկաւ: Անգլիայի Գաւաթի 1/16 եզրափակիչի գոյգերը որոշուելու են վիճակահանութեամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏՊՈԼԻ ՀԱՄԱԿԱՆՈՒՄ 40-ՐԴՆ Է ԵՐՈՊԱՅՈՒՄ

«Ֆրանս ֆուտպոլ» հանրայայտ պարբերականը ամփոփելով անցած մրցաշրջանը, աւանդուցի չհամաձայն Եւրոպայի ազգային հաւաքականներին դասակարգել է ըստ իրենց ցոյց տուած արդիւնքների:

Ըստ լրատուամիջոցի, աշխարհամասի 2016 թուականի լաւագոյն հաւաքականը Եւրոպայի ախոյեան Պորտուգալիայի ընտրանին է, որը 17 խաղում տարել է 10 յաղթանակ, կրել 3 պարտութիւն, խփել 42, բաց թողել 11 գնդակ: Յաջորդ երկու տեղերը զբաղեցրել են Ֆրանսիան ու Գերմանիան:

Հայաստանի ֆուտպոլի հաւաքականն այդ աղիւսակում զբաղեցնում է 40-րդ տեղը: Մեր ընտրանին 2016 թուականին անցկացրել է 8 հանդիպում: Ընկերական չորս խաղերում Հայաստանը տօնել է 2 յաղթանակ, 1 խաղ աւարտել է ոչ-ոքի, իսկ մէկում պարտութիւն է կրել, խփել է 11 կոլ, բաց թողել՝ 4-ը:

2018թ աշխարհի առաջնութեան ընտրական փուլում անցկացրած 4 հանդիպումներում մեր թիմը տարել է ընդամենը մէկ յաղթանակ՝ կրելով երեք պարտութիւն: Գնդակները յարբերութիւնն է՝ 4-10:

Նշենք, որ «Ֆրանս ֆուտբոլն» այս դասակարգումը վարում է սկսած 1959 թուականից: Վերջին 20 տարիների արդիւնքներով Եւրոպայի լաւագոյն ազգային թիմը Սպանիայի հաւաքականն է, որը 8 անգամ զբաղեցրել է 1-ին տեղը: Ապա յաջորդում են Իտալիայի, Գերմանիայի, Ֆրանսիայի եւ Հոլանդիայի ընտրանիները:

Հայաստանի հաւաքականը բացակայում է ութեզգույնների ցուցակից, քանի որ ոչ մի անգամ չի յայտնուել լաւագոյն տասնեակում:

ՈՒԷՅՆ ՌՈՒՆԻՒՆ ՀԱՒԱՍԱՐՈՒԵՑ ՄԱՆՉԵՍԹԵՐ ԵՌՆԱՅԹԸՏԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԼԱՒԱԳՈՅՆ ՌՄԲԱՐԿՈՒ

Մանչեսթեր Եունայթըտի յարձակուող Ուէյն Ռունին ակումբում խփած գոլերի թւով հաւասարուել է Բոբի Չարլթոնին՝ Եունայթըտի պատմութեան լաւագոյն ումբարկուին: Անգլիայի գաւաթի խաղարկութեան 3-րդ փուլում Ռեդինգի դարպասը խփած կողը 249-րդն էր Ռունիի համար: 250-րդ գոլը Ռունիին կը դարձնի ակումբի պատմութեան լաւագոյն ումբարկու:

Հ.Մ.Ս.Ի ՖՈՒԹՊՈԼԻ ԽՈՒՄԲԻ ՁՍԵՌՆԱՅԻՆ ՇՐՋԱՆԻ ՄՐՅՈՒՄՆԵՐՈՒ ՅԱՅՏԱԳԻՐԸ

- 1) Կիրակի, 15 Յունուար 2017ին առաւօտեան ժամը 8:00ին Հ.Մ.Ս. ընդդէմ COBRA KAI
Griffith Soccer Park 3401 Riverside Drive, Los Angeles, CA 90027
- 2) Կիրակի, 22 Յունուար, 2017ին կէսօրը ետք ժամը 1:30ին Հ.Մ.Ս. ընդդէմ Dinamo Internazionale
6201 Balboa Blvd. Van Nuys, CA 91406
- 3) Կիրակի, 29 Յունուար 2017ին կէսօրը ետք ժամը 3:40ին Հ.Մ.Ս. ընդդէմ LA CITY UNITED
Rio De L.A. 1900 N. San Fernando Road, Los Angeles, CA 90065

ՏԱՐՈՒԱՅ ԼԱՒԱԳՈՅՆ ՖՈՒՏՊՈԼԻՍԸ ՔՐԻՇՏԻԱՆՈՒ ՌՈՆԱԼԴՈՒՆ Է

Յիւրիխում կայացած ՖԻՖԱ-ի 2016 թուականի պարգեւատրման արարողութիւնում տարուայ լաւագոյն ֆուտպոլիստ հռչակուեց Պորտուգալիայի հաւաքականի եւ Մադրիդի «Ռեալի» յարձակուող Քրիշտիանու Ռոնալդուսը: Նա հաւաքած ձայներով առաջ անցաւ «Բարսելոնայի» արժենթինացի յարձակուող Լիոնել Մեսսիից եւ Մադրիդի «Աթլետիկոյի» ֆրանսացի յարձակուող Անտուան Գրիզմանից:



2016 թուականի լաւագոյն մարզիչ ճանաչուեց Անգլիայի ախոյեան «Լեսթերի» գլխաւոր մարզիչ, իտալացի մասնագէտ Կլաուդիո Ռանիերին: Տարուայ լաւագոյն ֆուտպոլիստուհու մրցանակին արժանացաւ ամերիկուհի Կարլի Լլոյդը:

ՄԵՍԻԻ ԳԵՂԵՑԻԿ ԿՈԼԸ ՓՐԿԵՑ «ԲԱՐՍԵԼՈՆԱՅԻՆ»

2017 թուականը յաջող չի սկսում «Բարսելոնայի» համար: Նոր տարուայ երկրորդ խաղում եւս կատալոնական ակումբը չյաղթեց: Սպանիայի առաջնութեան 17-րդ տուրում մրցակիցը «Վիլյաուեան» էր, որի դէմ արտագնայ խաղում գրանցուեց 1:1 հաշիւը:



Իտալացի յարձակուող Նիկոլա Սանսոնէի՝ երկրորդ խաղակէսի սկզբնամասում խփած կոլի շնորհիւ դաշտի տէրերը հաշուի մէջ առջեւում էին մինչեւ 90-րդ րոպէին, սակայն Լիոնել Մեսսին «Բարսելոնային» փրկեց պարտութիւնից: Արժենթինացի յարձակուողն անթերի իրացրեց տուգանային հարուածը:

«Բարսելոնան» 35 միաւորով նահանջեց երրորդ տեղ եւ 5 միաւոր հետ է առաջատար Մադրիդի «Ռեալից», որը մէկ խաղ էլ պակաս է անցկացրել: Երկրորդ տեղ բարձրացած «Սեւիլիան» ունի 36 միաւոր, իսկ «Վիլյաուեալը» 30 միաւորով 5-րդն է:

Յիշեցնենք, որ Յունուարի 6-ին «Բարսելոնան» Սպանիայի գաւաթի խաղարկութեան 1/8 եզրափակիչի առաջին խաղում 1:2 հաշուով պարտուել էր Բիլբաոյի «Աթլետիկին»:

ՖԻՖԱ-Ն ԿՈՐԱԿԱԶՐԿԻ ԱՓՐԻԿԵԻ ԳԱՒԱԹԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒՅ ՅՐԱՓԱՐՈՒԱԾ ՖՈՒՏՊՈԼԻՍՏՆԵՐԻՆ

Եւրոպական ակումբներում հանդէս եկող ափրիկեցի ֆուտպոլիստները, որոնք չեն մասնակցի Ափրիկէի գաւաթի խաղարկութեանը, կ'որակազրկուեն, իսկ ակումբները, որոնք բաց չեն թողնի այդ ֆուտպոլիստներին, կտուգանուեն:

Տեղեկացնենք, որ Կամերունի հաւաքականի խաղացողներ ժոէլ Մատիպը (Լիբերպոլ) եւ Ալան Նիոմը (Վեսթ Բրոմվիչ) հրաժարուել են մասնակցել հաւաքականի խաղերին: Կամերունի հաւաքականի ղեկավարութիւնը յայտարարել է, որ հարկադրուել է խաղացողներին ժամանել հաւաքական:

Մատիպից եւ Նիոմից բացի Կամերունի հաւաքականում հրաժարուել են հանդէս գալ նաեւ էրիկ Մաքսիմ Չուպո-Մոտինգը Շալկէից, Գի Ն'դի Ասեմբեն Նանսիից, Մաքսիմ Պոլոնջեն Բորդոյից, Անդրէ Օնանան Այաքսից, Անդրէ-Յորակ Ջամբօ Անգիսան Մարսելից եւ Իբրահիմ Ամադուս Լիլից:

Ափրիկէի գաւաթի խաղարկութիւնը կը մեկնարկի Յունուարի 14-ին:

ԱՐԹՈՒՐ ԱԼԵՔՍԱՆԵԱՆԸ՝ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ԱՌԱՋԱՏԱՐ, ՄԻՅՐԱՆ ՅԱՐՈՒԹԻՆԵԱՆԸ՝ ԵՐԿՐՈՐԴ

Ըմբռնամարտի միջազգային ֆեդերացիան ներկայացրել է յունահռոմէական ոճի ըմբռնների թարմացրած վարկանիշները:

Ռիօ-2016-ի օլիմպիական ախոյեան Արթուր Ալեքսանեանը գլխաւորում է 98 կգ քաշայինների աղիւսակը:

Ռիօ-2016-ի փոխախոյեան Միհրան Յարութիւնեանը երկրորդն է 66 կգ քաշային կարգում եւ գլխում է միայն սերը Դաւոր Շտեֆանեկին, որն Օլիմպիական խաղերի եզրափակիչում հայ ըմբռնիչ յաղթել էր կողմնակալ մրցավարութեան շնորհիւ:

Եւրոպայի 2016թ. ախոյեան վարչամ Բորանեանը 8-րդն է 71 կգ քաշային կարգում: 75 կգ քաշային կարգում Արսէն Ջուլֆալակեանը 12-րդ տեղում է, իսկ Կարապետ Չալեանը 15-րդն է:

Ձեր Ծանուցումները Վստահեցեք «Մասիս» Շաբաթաթերթին

T: (626) 797-7680 massis2@earthlink.net

Հնարաւոր է՝ ԼՂ Հարցի Լուծումը Պարտադրուի

Շարունակուած էջ 6-էն

կապերը ՀՀ գործող ղեկավարներին հետ եւ փորձել նրանց փոխարինել իշխանական բուրգի այլ անդամներով: Հետեւաբար յանուն իշխանութեան պահպանման գերխնդրի՝ ՀՀ ներկայիս ղեկավարները կը շարունակեն իրենց պասիւ դերը ԼՂ բանակցութիւններում:

Աւելին՝ ՀՀ-ն, յատկապէս 2016-ի Ռուսաստանի հետ սրբնթաց ինտեգրացիոն քայլերից յետոյ, առաւել քան երբեք դիտուած է իբրեւ Մոսկուայի արբանեակ: Սրա արդիւնքում էլ աւելի է նուազել ՀՀ կողմի ազդեցութիւնը բանակցութիւնների սեղանի շուրջը: ԼՂ խնդրի լուծման հիմնական արգելքը Ռուսաստանի եւ Ատրպէյճանի միջեւ դեռ չհարթեցուած դիրքերն են՝ հատկապէս խաղաղարարների եւ ԼՂ կարգավիճակի առումով:

Պատերազմի հաւանականութիւնը բարձր է: Եթէ Մոսկուան եւ Պաքուն համաձայնութեան գան, իսկ հայ հասարակութիւնը ընդդիմանայ նման որոշմանը, ապա հնարաւոր է, որ հարցի լուծումը պարտադրուի արագ եւ առաւել արիւնալի շարձակամբ, ինչն, իհարկէ, Բաքուն կանի Մոսկուայի գիտութեամբ: Սա կարող է հիմք ծառայել լուծման ներկայիս փաթեթի ՀՀ կողմնակիցներին՝ համոզելու հանրութեանը, որ Հայաստանը ի վիճակի չէ ԼՂ-ն ներկայիս սահմաններով պահել:

Միայն դիւանագիտական ջանքերը հերիք չեն ԼՂ հարցը ՀՀ-ի համար ցանկալի տարբերակով լուծելու համար: ՀՀ-ն կարիք ունի նոր տեսլականի կոնֆլիկտի լուծման հարցում եւ ազատ ընտրութիւններում ընտրուած իշխանութիւններին, որոնք կարող են անհրաժեշտութեան դէպքում ընդդիմանալ իրենց ռազմավարական դաշնակից Ռուսաստանին այն դէպքում, երբ երկուսի շահերը բախուած են:

- Յիմա շատ եմ քննարկում Լեւոն Տէր-Պետրոսեանի ելոյթը Ղարաբաղեան հիմնախնդրի կարգաւորման մասին: Այս իրավիճակում հնարաւոր է գնալ փոխզիջումների, հիմնախնդրի լուծման: Ո՞րն է Ձեր ընդհանուր կարծիքը այդ ելոյթի մասին: Դա ճիշտ մտեցում է:

- Տէր-Պետրոսեանի սկսած արշաւը հակասական է: Այն թէ՛ օգտակար է եւ թէ՛ վնասակար: Այն օգտակար է, քանի որ հասարակական քննարկումները կարող են ցոյց տալ, թէ արդեօք հանրութիւնը կարճ ժամանակում օգտուելով այն փաստից, որ Միացեալ Նահանգները եւ ԵՄ-ն իրենց հիմնական ռեսուրսները ներքաղաքական խնդիրների վրայ են ծախսելու: Այս համապատկերում առնուազն համոզիչ չեն այն փաստարկները, որ կարելի է լուծել ԼՂ հարցը՝ յենուելով միջազգային հանրութեան երաշխիքների եւ խաղաղարար ուժերի տեղակայման վրայ: Աւելին, հաշուի առնելով, որ վերջին շրջանի գրեթէ բոլոր խաղա-

ինֆորմացիոն պատերազմի մեթոդները շատ արդիւնաւէտ են: Արդիւնքում հանրային կարծիքը կարող է կիսուել՝ յատկապէս, երբ այդ քննարկումները խեղաթիւրուած են, եւ խնդրը ներկայացուած է իբրեւ պարզեցուած ընտրութիւն՝ մշտական վախի կամ ապահովութեան բարեկեցիկ ապագայի միջեւ:

Իբրեւ քաղաքական վարժութիւն այն, իհարկէ, հետաքրքիր է, բայց Տէր-Պետրոսեանը չդուրս է կատարում 1990-ականների եւ 2000-ականների Արեւմուտքին եւ Ռուսաստանին եւ միջազգային համակարգին: 2016-ը շրջադարձային տարի է այն համակարգի համար, որ ստեղծուել է 25 տարի առաջ՝ Խորհրդային Միութեան փլուզումից յետոյ: Շատ մասնագէտներ անգամ մտահոգ են, որ 1945-ից ի վեր գործող միջազգային համակարգը կարող է վտանգի մէջ լինել:

Մադրիդեան սկզբունքները՝ իրենց ռուսական իմբրացումով, այժմ արդէն ժամանակավրէպ են: Դրանք պատկանում են հետխորհրդային այն երկու տասնամեակներին, երբ Արեւմուտքն ու Ռուսաստանը Սառը պատերազմը աւարտեցին, եւ աւելին՝ ողջ նախկին սոցիալիստական բլոկի երկրները, այդ թւում՝ Ռուսաստանը, գոնէ անուանական առումով որդեգրեցին լիբերալ-դեմոկրատական համակարգը: Սա այն ժամանակ էր, երբ Ուկրաինան համաձայնուեց յանձնել իր միջուկային գէնքը՝ փոխարէնը ստանալով բոլոր գերտէրութիւնների, այդ թւում նաեւ Ռուսաստանի երաշխիքը, որ իր տարածքային անվտանգութիւնը կ'ապահովուի: Բայց անգամ այն տարիներին չչաջողուեց լուծել ԼՂ խնդիրը: Իսկ 2014-ին Ուկրաինան մասնատուեց նոյն Ռուսաստանի կողմից, որն այդ երկրի տարածքային ամբողջականութեան երաշխաւորներից էր:

Գլոբալ քաղաքականութիւնում տեկտոնիկ փոփոխութիւններ են տեղի ունենում այսօր, որոնք կարող են լրջօրէն ազդել ներկայիս թէ՛ քաղաքական, թէ՛ տնտեսական գլոբալ կառույցների վրայ: Ռուսաստանը, օգտուելով Արեւմուտքի թողած իշխանութեան դատարկութիւնից, գոնէ ռեզիոնալ առումով իրեն պահում է իբրեւ նէօ-կայսրութիւն, գլոպալ խաղացող, որն ինքն է խաղի կանոնները թելադրում: 2017-ին Ռուսաստանը առաւել համարձակ կը լինի յատկապէս յետխորհրդային երկրների կլանման առումով՝ օգտուելով այն փաստից, որ Միացեալ Նահանգները եւ ԵՄ-ն իրենց հիմնական ռեսուրսները ներքաղաքական խնդիրների վրայ են ծախսելու:

Այս համապատկերում առնուազն համոզիչ չեն այն փաստարկները, որ կարելի է լուծել ԼՂ հարցը՝ յենուելով միջազգային հանրութեան երաշխիքների եւ խաղաղարար ուժերի տեղակայման վրայ: Աւելին, հաշուի առնելով, որ վերջին շրջանի գրեթէ բոլոր խաղա-

ղարար առաքելութիւնները, այդ թւում նաեւ ռուսականը, ձախողուել են, անհասկանալի է, թէ ի՞նչ անվտանգութեան երաշխիքների մասին է խօսքը:

Եթէ խօսքը Ռուսաստանի տուած անվտանգութեան երաշխիքների մասին է՝ իբրեւ նորընծայ համաշխարհային գերտէրութիւն, ապա ոչ մի վերլուծութիւն չմատուցուեց, թէ Տէր-Պետրոսեանը ինչպէ՞ս է գնահատում Ռուսաստանի միջին եւ երկարաժամկէտ դերը ռեզիոնում եւ աշխարհում: Եթէ Մոսկուան է ԼՂ հարցի անվտանգութեան երաշխաւորը, ապա որքանով է կայուն այդ երկրի նոր որդեգրած համարձակ արտաքին քաղաքականութիւնը: Կը կարողանա՞յ Ռուսաստանը իր դիրքերը պահել եւ ամրացնել այս նոր Սառը պատերազմում, երբ այն անգամ աշխարհի 10 ամենախոշոր տնտեսութիւնների շարքում չէ: Արդեօք Տէր-Պետրոսեանը կարծում է, որ եկել է Ռուսաստանի՝ իբրեւ գերտէրութեան, սկիզբը, թէ՛ սա կարճաժամկէտ պիկ է, որի համար Մոսկուան թանկ կարող է վճարել՝ մանաւանդ, երբ իր օգտագործուեն խաղի կանոնները օգտագործուեն հենց Մոսկուայի դէմ: Ի՞նչ կը լինի այդ դէպքում ԼՂ-ի անվտանգութեան հետ՝ հաշուի առնելով, որ Ատրպէյճանը առաւել ճկուն արտաքին քաղաքականութիւն է վարում եւ յստակ ծաւալապաշտական ծրագրեր ունի Հայաստանի նկատմամբ:

- Ընդհանրապէս, որո՞նք պիտի լինեն Յայաստանի արտաքին քաղաքականութեան առաջնահերթութիւնները առաջիկայ ժամանակահատուածում՝ Արեւմուտք, Ռուսաստան, Իրան, Չինաստան, Արաբական աշխարհ եւ այլն: Ի՞նչ վերանայումներ պիտի արուեն:

- ՀՀ-ն արդէն կատարել է իր ընտրութիւնը. այն ռուսամէտ եր-

կիր է: Մտ ապագայում այն կը շարունակի իր տնտեսութեան, ռազմական եւ արտաքին քաղաքական վարույթի մասնակի փոխանցումը Ռուսաստանին: Հայաստանը, իհարկէ, ունի այլ տարբերակներ, բայց իր իշխանական բուրգը, այդ թւում նաեւ հիմնական ընդդիմութիւնը նախընտրում են Ռուսաստանի հետ սերտաճումը, ինչին բնակչութեան մեծ մասը, թւում է, դէմ չէ:

ՀՀ հիմնական խնդիրն այս յարաբերութիւններում այն է, որ Մոսկուան ամէն կերպ կը փորձի նաեւ Ատրպէյճանին բերել իր ազդեցութեան գօտի: Այս դէպքում արդէն հնազանդ Հայաստանի շահերը Լեւոնային Ղարաբաղում կարող են օգտագործուել իբրեւ մանրադրամ, ինչպէս եղաւ 20-րդ դարի սկզբին: Աւելին, Ռուսաստանի ներկայիս արտաքին քաղաքական վերելքը կարող է կարճաժամկէտ լինել: Մոսկուան առաջին անգամ հատել է գծեր արեւմտեան երկրների ներքաղաքական կեանքում, ինչը գրեթէ անհնար է, որ անպատասխան մնայ: Սա նշանակում է, որ ՀՀ-ն կարող է ներգրաւուել անցանկալի մրցավազքի մէջ՝ յօգուտ Ռուսաստանի եւ ի վնաս իր ազգային շահերի:

ՀՀ-ն Ռուսաստանի հետ յարաբերութիւնների վերաճեակերպման կարիք ունի, եւ ԵՏՄ միւս անդամ երկրները, որոնցից մի քանիսը եւս լուրջ անվտանգութեան խնդիրներ ունեն, լաւ օրինակ են ՀՀ-ի համար, թէ ինչպէս կարելի է փորձել վերաբախանալու իր այդ յարաբերութիւնները:

Ի վերջոյ՝ սթափ պատկերացում է պէտք ունենալ, թէ ի՞նչ վտանգներ են սպառնում Ռուսաստանին իր նորայայտ շարձակոդական արտաքին քաղաքականութեան արդիւնքում, եւ դա ինչպէ՞ս է ազդելու Հայաստանի վրայ:

Հետաքրքրուած եմք իրենց փոխարժեքով ստանալ՝

- Հայկական երգարաններ
- Կիլիկիոյ պատմական գիրքեր
- Ցեղասպանութեան հետ առընչուած գիրքեր

Եթէ ունիք նման գիրքեր եւ կը փափաքիք զանոնք վաճառել, կը խնդրենք մեզի հետ կապ հաստատել հեռաձայնելով կամ e-mailով՝ ՎԱՀԷ ԱՋԱՊԱՀԵԱՆԻՆ:

Vahe Atchabahian
1743 E. Elizabeth St. • Pasadena, CA 91104
Tel: 626-354-5924
vamedia@yahoo.com



SEROP'S CAFE
GREEK & LEBANESE FOOD
SERVING BATON ROUGE SINCE 1979

ՀՈԳԵՅԱՆԳԻՍ



ԼՈՒԼՈՒ (ԽԱՅԵԱՆ) ՖԵՐՄԱՆԵԱՆ

Լուլու (Խայեան) Ֆերմանեանի մահուան տասնեօթերորդ (17) տարեկիցին առիթով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 22 Յունուար, 2017ին, Ս. Պետրոս Հայց. Առաքելական Եկեղեցու մէջ, 17231 Sherman Way, Van Nuys յաւարտ Ս. Պատարագի: Հանգուցեալին յիշատակը յարգողներէն կը խնդրուի ներկայ գտնուիլ: Սգակիրներ՝ Տէր եւ Տիկին Արա Ֆերմանեան Վիգէն Գուլումճեան

ՑԱԲԱԿՑԱԿԱՆ

ԺՈՉԷՖ ԺԻՐԱԳՈՅԻ մահուան տխուր առիթով Նոր Սերունդ Մշակութային Միութիւնը իր խորագրաց ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի այրիին՝ Տիկին Շնորհիկին, գաւկին Արթիւրին եւ համայն հարազատներուն:

ՑԱԲԱԿՑԱԿԱՆ

ԼԻՆՏԱ ՔԷՔԼԻՔԵԱՆԻ մահուան առիթով (մահացած Գանատա) Նոր Սերունդ Մշակութային Միութիւնը իր խորագրաց ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի ընտանեկան համայն պարագաներուն, մասնաւորաբար՝ Տէր եւ Տիկ. Յովհաննէս եւ Ժագլին Սէրուրեանին:

Քաղաքական Դաշտի 2017 Թուի

Շարունակուած էջ 7-էն

Հարկաւոր էր դրսից թարմ, հնարաւորինս անբիծ, արհեստավարժ կազմակերպիչներին ներառումը պետականաշինութեան գործընթացներին: Կարէն Կարապետեանի նշանակումը վարչապետի պաշտօնում, կարծես Սարգսեանական բարեփոխումների անկիւնաքարը եղաւ: Միանշանակ ասեմք, որ համակարգային փոփոխութիւնների համար դա անհրաժեշտ է, բայց բաւարար չէ:

Այժմ մի այլ հարցի մասին որ ըստ էութեան պէտք է կոչենք «նախընտրական բարեգործութիւն» յայտնագործութիւն արած չենք լինի, եթէ ասեմք որ բարեգործութիւնը մարդասիրական դաստիարակչական ֆունկցիայից զատ ունի մի այլ գործառնութիւն:

Դա այն է, որ երբ պետութիւնը ազգային եկամտի ռացիոնալ եւ արդարացի բաշխման իր ֆունկցիան անկարող է լինում կատարել, ունեւոր խաւի որոշակի մասը ստանձնում է բարեգործական խողովակներով յաւելեալ միջոցների վերաբաշխման գործողութիւնը:

Ընտրութիւնից ընտրութիւն «բարեգործութիւնները» նիւթական դրամական կամ ծառայութիւնների ձեւով, հետապնդելով քաղաքական շահ, ոչ այլ ինչ են եթէ ոչ կաշառք, որտեղ ընտրողի ձայնը արժեւորւում է մանրադրամներով: Ընտրակաշառքը կոռուստայացուած համակարգի բաղկացուցիչ մասն է: Այսքանով հանդերձ ժողովուրդը

դը որին իբր թէ վարչակարգը կոչուած է ծառայելու զանազանում է, նուիրեալ բարեգործին, վաշխառու իշխանատենչի հետ: Գազիկ Մառուկեանը յայտնի դէպքերից հետ, որ ստիպուած եղաւ քաղաքականութիւնը լքել, այժմ այդ առումով գտնուում է շահեկան դիրքերում:

Չնայած տարածուած այն կարծիքին, որ Գ. Մառուկեանի «յեռ կանչը» Ս. Սարգսեանի մեծ կոմբինացիայի մի մասն է՝ ընդդիմադիր դաշտը տրոհելու համար, ժողովուրդի եւ իշխանութեան միջեւ առաջացած վտանգաւոր վիճը մեղմացնելու նպատակով: Գ. Մառուկեանը վերադառնալու դէպքում, իր թիմով եւ ռեսուրսներով ընդդիմադիր քաղաքական բեւեռը համախմբելու եւ կայացնելու պոտենցիալ կարողութիւն ունի, եթէ սկզբունքային դիրքեր ունեցող ճիշտ ուժերի հետ դաշինք կազմաւորի:

Հայ հասարակութեանը ծանօթ էլի քաղաքական ուժեր կան, որոնք դասական գաղափարախօսութիւնն կրողներ են եւ նոյնպէս ճիշտ դաշինքներ կազմաւորելու դէպքում Հայոց պառլամենտը կը յազմեն բովանդակային նոր լիցքով: Յաւօք սրտի կազմակերպուած մրցունակ ընդդիմադիր ճակատի ձեւաւորման եւ յաղթանակի պարագայում անգամ օրէնսդիր մարմնի գարգացման մեծ տեմպ չենք ունենալու:

Ընդամենը արձանագրելու ենք վայրի լիբերալիզմից «անցում» ֆորմալ լիբերալիզմի: Ինչ խօսք, դա էլ է լինելու յուսադրող յաջողութիւն:

CCAF-ը կը Դատապարտէ

Շարունակուած էջ 7-էն

կաթոլիկները: Մենք, մշակութային եւ կրօնական այս բազմազանութիւնը կը նկատենք որպէս մեր երկրին եւ մեր ժողովուրդին անժխտելի հարստութիւնը»:

Քարամի պատասխանը՝ դեսպանին

Ամիրպայտովի այս նամակին, Փաթրիք Քարամ երակարաշունչ պատասխան մը գրած է: Ան, նախ եւ առաջ կ'ըսէ, թէ համաձայն է, որ խնդրոյ առարկայ հակամարտութիւնը կրօնական չէ, «նոյնիսկ եթէ պահ մը նման թեքում ունեցաւ, երբ 1993ին յանուն իսլամական գորակցութեան եւ յանուն ձիհատի՝ չէջններ եւ աֆղաններ կոռուեցան ատրպէյճանցիներու կողքին: Ապա կը նշէ, թէ եթէ անիկա Ատրպէյճանի համար հողային հակամարտութիւն է, Ղարաբաղի բնակչութեան համար ալ՝ ազատ ապրելու, ինքնավարութեան իրաւունքի յենող՝ Մարդկային իրաւանց հարց է:

«Այլեւս կայ իրականութիւն մը, որ ձեր պետութիւնը պէտք է ընդունի: Լեռնային Ղարաբաղի բնակչութիւնը կատարեց իր ընտրութիւնը եւ իւրաքանչիւր առիթով կ'արտայայտէ զայն: Կը մերժէ Ազրպէյճանի որեւէ կցում, գոր կը նկատէ իր ապահովութեան եւ ինքնութեան սպառնալիք», կ'ըսէ Քարամ:

Ապա, ինքն ալ, իր կարգին, կը թուէ հայկական բնակչութիւնները թիրախ առած ատրպէյճանական յարձակումները, ի մասնաւորի Սումկայի թի, Կիրովպատի, Պաքուի ջարդերը, եւ մասնաւորապէս 1992ին Ստեփանակերտի ռմբակոծումը: «1992ի ամրան ներկայ էի Ստեփանակերտ, անձնապէս հաստատեցի ատրպէյճանական օդուժին մահաբեր յարձակումները՝ ուղղուած անգէն եւ սարսափահար բնակչութեան՝ կիներուն, երեխաներուն, տարեցներուն դէմ, որոնք խոյս տալով Շահումեանէն եւ

Մարտակերտէն, փողոցները պարզուած կէս-կատար վրաններու տակ խոնուած էին», կ'ըսէ ան:

Քարամ կ'անդրադառնայ նաեւ Հայոց Յեղասպանութեան հերքումի նիւթին: Ան Ամիրպայտովին դիտել կու տայ, թէ Ատրպէյճանի թուրքիոյ հետ «երկու երկիր, մէկ ազգ» ըլլալ կը յայտարարէ, կը մերժէ ընդունիլ Յեղասպանութիւնը եւ ընդհակառակն՝ իր աջակցութիւնը կը բերէ իր «քոյր պետութեան» ժխտողականութեան:

Ան կ'ըսէ նաեւ, թէ նախընտրելի է, որ Ազրպէյճան իր նաւթահորերէն ձեռք ձգած հասոյթը փոխանակ սպառազինման՝ գործածէ իր գաղթականներուն եւ ընդհանրապէս բնակիչներուն բարօրութեան:

Նամակը կ'աւարտի հետեւեալ տողերով. «Լեռնային Ղարաբաղի կցումին համար ուժի գործածութիւնը ապարդիւն ըլլալու դատապարտուած է եւ բարոյապէս անպաշտպանելի է: Փոխանակ եուկոսյաւական բեմադրութեան, որ պատճառ դարձաւ այնքա՛ն դժբախտութիւններու եւ մարդկային ողբերգութիւններու, որ արգելք չկրցաւ ըլլալ բաժանումներու, այսօր Ազրպէյճանի կայունութեան, տնտեսական զարգացման, ընկերային եւ քաղաքական բարեշրջման նպաստաւոր կ'ըլլայ, որ ընտրէ Չեխոսլովաքիոյ օրինակը, ուր ստեղծուեցաւ երկու պետութիւն առանց ողբերգութեան, առանց արիւն հոսեցնելու՝ շնորհիւ ղեկավարներու իմաստութեան, որոնք կ'ուզէին խնայել իրենց բնակչութիւնները»:

Քարամ ծագումով լիբանանցի է եւ Կուաթըլուփ մեծցած է: Մարդկային իրաւանց պաշտպան, Մարքոզիի կառավարութեան մէջ Անդրժոզեան ֆրանսացիներու կարելիութիւններու հաւասարութեան միջնախարարական պատուիրակի պաշտօնը վարած է: «Նոր Յառաջ»

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԱԻԵՏԱՐԱՆՉԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Շարունակուած էջ 8-էն

տան, ուր կը պայքարին վերահաստատելու իրենց կեանքը Հայրենիքի մէջ: Մեր բոլորին նիւթական աջակցութիւնը, հոգ չէ թէ մեծ կամ փոքր, մեծապէս պիտի նպաստէ բոլոր անոնց, որոնք տակաւին կարիքը ունին մեր աջակցութեան՝ ընտանիքներ եւ անհատներ՝ որոնք խիզախօրէն դիմազարուած են տագնապը եւ

տակաւին կը շարունակեն տառապիլ՝ քաղաքական անկայունութիւններու պատճառով: Վերջապէս, մեր եղբայրները եւ քոյրերը կարիքը ունին նաեւ մեր ամէնօրեայ աղօթքներուն: Առատաձեռնօրէն շարունակենք նպաստել Սուրիահայ Մայր Գաղութի գաւախներուն՝ կանգուն պահելու համար Եղեռնէն յարուած ինքնուրու մեր ժողովուրդի առաջին ապաստանարանը:

ՎԱՐՉՈՒ ՄՐԱՅ
ՓԱՍՍԻՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻ ՀԱՍԱՐ)
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՍԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ՄԱՆՐԱՍԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ԴԵՆԱՉԱՅՆԵԼ (626) 797-7680



ՀԱՅ ՄԱՐՄՆԱՄԱՐՉԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ ՋԵՐՄՕՐԷՆ ԿԸ ՇՆՈՐՀԱՒՈՐԷ

**Իր բոլոր անդամներուն, համակիրներուն,
նուիրատուներուն, հովանաւորներուն եւ
բարեկամներուն
ՆՈՐ ՏԱՐԻՆ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴԸ**

մաղթելով քաջառողջ, երկար եւ երջանիկ տարիներ

